# Azg Ազգ

27 ՄԱՅԻՍ 1997, ԵՐԵՔՇԱԲԹԻ # 97 (1351)


## Թալիբները մոտ են վերջնական հաղթանակին

26 ՄԱՅԻՍ, BBC, RFI: Աֆղանստանում թալիբների ուժերը, որոնք այժմ վերահսկում են երկրի տարածքի 90 տոկոսը, շարունակում են ռազմական հաջողություններ հասնել, որոնց ավելացավ նաեւ դիվանագիտականը: Երեկ Պակիստանը դարձավ աշխարհի առաջին պետությունը, որը պաշտոնապես ճանաչեց Քաբուլի նոր իշխանություններին: Շաբաթ օրը թալիբների ուժերը գրավեցին ընդդիմադիրների գլխավոր հենակետը՝ Մազարի Շարիֆ քաղաքը եւ ռազմավարական նշանակություն ունեցող Սալանգի լեռնանցքը, որի գրավումից հետո թալիբների համար բացվեց ճանապարհը դեպի հյուսիս: Ֆրանսպրես գործակալության հաղորդման համաձայն, Ահմադ Շահ Մասուդի զինյալները այսօր Սալանգի մոտակայքում գրոհել են թալիբների ուժերի վրա, իսկ ընդդիմության մյուս հրամանատարը՝ գեներալ Դոստումը փախել է Թուրքիա:

Աֆղանստանի նախկին նախագահ Բուրհանուդդին Ռաբանին, ըստ Ռոյթերի, փախել է Տաջիկստան: Ըստ Ֆրանսպրեսի, Մազարի Շարիֆում գտնվող Ռուսաստանի հյուպատոսարանի շենքը երեկ գրավվել է թալիբների կողմն անցած գեներալ Աբդուլ Մալիկի զինյալների կողմից: Եվ չնայած որ Մալիկը ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին հայտարարել է, թե թալիբները սպառնալիք չեն հանդիսանա կենտրոնական Ասիայի եւ Ռուսաստանի համար, Մոսկվան անցած շաբաթ օրը նախազգուշացրեց, որ թալիբների յուրաքանչյուր զինված միջամտության ԱՊՀ տարածքում անմիջապես կհետեւի պատասխան գործողությունը:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

## Ուկրաինայի Գերագույն ռադայի պատվիրակությունը՝ Երեւանում

*«Ուկրաինան հարգանքով է վերաբերվում ռուս եւ բելառուս ժողովուրդների կամքին»*

ԵՐԵՎԱՆ, 26 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ուկրաինայի խորհրդարանական պատվիրակության Հայաստան առաջին այցի նպատակը երկու երկրների միջխորհրդարանական կապերի զարգացումն է, տարբեր բնագավառներում համագործակցության օրենսդրական ուղեկցման ապահովումը: Այս մասին Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում մայիսի 26-ին հայտարարեց ՀՀ Ազգային ժողովի ղեկավարության հրավերով երկօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանած Ուկրաինայի Հանրապետության Գերագույն ռադայի պատվիրակության ղեկավար, Գերագույն ռադայի նախագահ Ալեքսանդր Մորոզը: Նա նշեց, որ երկու խորհրդարանները պետք է շարունակեն զարգացնել եւ ամրապնդել հասարակությունների մասին 1995 թ. ստորագրված պայմանագրով նախատեսված գաղափարները:

Ռուսաստանի եւ Բելառուսի միության վերաբերյալ վերջերս ստորագրած պայմանագրի առնչությամբ Ա. Մորոզն ասաց. «Մենք հարգանքով ենք վերաբերվում ռուս եւ բելառուս ժողովուրդների կամքին: Իրենք որոշել են նման ձեւով կառուցել իրենց հարաբերությունները, բող կառուցեն: Մենք չենք կարող իրենց արգելել կամ այդ կողակցությամբ բողոքել: Դա իրենց գործն է, իրենց ճակատագիրը: Իմ կարծիքով, Ուկրաինան այժմ մտադիր չէ Ռուսաստանի հետ իր հարաբերություններ կառուցել նման սկզբունքների հիման վրա: Բայց ամեն դեպքում այդ հարաբերությունները պետք է լինեն եղբայրական, քանի որ մենք իրար հետ սերտորեն կապված ենք թե մեր լեզվով, թե քաղաքական եւ այլ հարցերում»:

Պատվիրակությանը դիմավորեցին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, փոխնախագահ Արա Սահակյանը, պատգամավորներ:

Այցի շրջանակներում Ա. Մորոզը կհանդիպի ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, ՀՀ ԱԺ նախագահ Բ. Արարքցյանի, վարչապետ Ռ. Քոչարյանի, ԱԳ նախարար Ա. Արզումանյանի հետ: Պատվիրակությունը կայցելի Ս. Էջմիածին, 1915 թ. ցեղասպանության թանգարան, ինչպես նաեւ ՀՀ-ում Ուկրաինայի դեսպանատուն, որ հանդիպում կունենա Ուկրաինայի դեսպանատան դիվանագիտական կազմի եւ ՀՀ-ում ուկրաինական համայնքի ներկայացուցիչների հետ: Այցի ավարտին կկայանա Ա. Մորոզի եւ Բ. Արարքցյանի հանդեսը մամուլի առջեւ:

Մայիսի 27-ի երեկոյան պատվիրակությունը կմեկնի Թբիլիսի:

ԱՅՑ

## ՀՀ նախագահը Հաագայում կմասնակցի «Մարշալի պլանի» 50-ամյակի տոնակատարություններին

ԵՐԵՎԱՆ, 26 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մայիսի 27-ին ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Հոլանդիայի վարչապետ Քոկի հրավերով կմեկնի Հաագա՝ մայիսի 27-28-ը մասնակցելու «Մարշալի պլանի» 50-ամյակին նվիրված տոնակատարություններին, որոնց կմասնակցեն նաեւ Եվրոպայի երկրների ղեկավարները եւ ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը:

ՀՀ նախագահին կուղեկցի ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը:

«Մարշալի պլանը» երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի տնտեսական օգնությամբ Եվրոպայի վերականգնման եւ զարգացման ծրագիրն է: Այն առաջարկվել է ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ. Մարշալի կողմից (նրա անունով էլ կոչվել է ծրագիրը) 1947 թ. հունիսի 5-ին: Նույն թվականի հունիս-հուլիսին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ ԽՍՀՄ-ի արտգործնախարարների խորհրդակցությունում առաջարկվեց Եվրոպայում ստեղծել «ղեկավար կոմիտե» Եվրոպական երկրների ռեսուրսներն ու կարիքները պարզելու, արդյունաբերության գլխավոր ճյուղերի զարգացման ուղղությունը որոշելու համար: ԽՍՀՄ-ը եւ նրա ազդեցության տակ գտնվող երկրները հրաժարվեցին մասնակցել ծրագրին:

«Մարշալի պլանն» ուժի մեջ է մտել 1948-ի ապրիլին: «Մարշալի պլանին» անդամակցում էին 16 պետություն՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Նիդերլանդները, Լյուքսեմբուրգը, Շվեդիան, Նորվեգիան, Դանիան, Իռլանդիան, Իսլանդիան, Պորտուգալիան, Ավստրիան, Շվեյցարիան, Հունաստանը եւ Թուրքիան: Եվրոպայի երկրներին տնտեսական օգնությունը հատկացվում էր ԱՄՆ-ի ֆեդերալ բյուջեից՝ անհատույց վարկերի եւ փոխառությունների ձեւով, որը 1948-51 թթ.-ին կազմեց 17 միլիարդ դոլար:

«Մարշալի պլանի» գործողությունը պաշտոնապես դադարեց 1951-ի դեկտեմբերի 30-ին: Այն փոխարինվեց «անվտանգության փոխադարձ ապահովման» օրենքով, որը նախատեսում էր ռազմական եւ տնտեսական օգնություն: Օրենքը ԱՄՆ-ի Կոնգրեսն ընդունեց 1951-ի հոկտեմբերին:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Մոհամեդ Խաթեմին՝ Իրանի նախագահ

*Երիտասարդները փոփոխություն են պահանջում*

1997 թ. մայիսի 23-ին Իրանում կայացած նախագահական 7-րդ ընտրություններում երկրի 5-րդ նախագահ ընտրվեց չափավորական թեւը ներկայացնող 54-ամյա հոջաթոլեսլամ Սեյեդ Մոհամեդ Խաթեմին, շահելով ձայների մեծամասնությունը: Նախագահի պարտականությունները պաշտոնապես նա կստանձնի օգոստոսին:

Մոհամեդ Խաթեմն ծնվել է 1943 թ. Կենտրոնական Իրանի Յազդ նահանգի Արտաքան քաղաքում, հոգեւորականի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում, այնուհետեւ ուսումը շարունակել Ղոմ քաղաքում գտնվող երկրի խոշորագույն կրոնական կենտրոնում: Առժամանակ անց նա ընդունվել է Սպահան քաղաքի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը, միաժամանակ ուսումնառությունը շարունակելով երկու հիշյալ հաստատություններում: 1970 թ. ընդունվել է Թեհրանի համալսարանի մանկավարժական գիտությունների դոկտորական բաժին, որն ավարտելուց հետո կրկին վերադարձել է Ղոմ բարձրագույն հոգեւորական ասիճանի գիտելիքներ ստանալու նպատակով: 1977 թ. տեղափոխվել է Գերմանիա ստանձնելով Համբուրգ քաղաքի իսլամական հայտնի կենտրոնի ղեկավարությունն ու առաջնորդությունը: 1979 թ. վերադառնում է Իրան եւ ընտրվում հեղեղափոխական առաջին խորհրդարանի պատգամավոր հայրենի քաղաքից: 1982 թ. ընդգրկվել է վարչապետ Միրհոսեյն Մուսավիի (այդ ժամանակ դեռ վարչապետի պաշտոնը չէր վերացել) կառավարության կազմում որպես մշակույթի եւ իսլամական կողմնորոշման նախարար եւ 6 տարի, քանի դեռ գոյատեւում էր Մուսավիի կառավարությունը, զբաղեցնում էր այդ պաշտոնը: Իրան-իրաքյան ութամյա պատերազմի տարիներին Իրանի զինված ուժերի հրամանատարության գլխավոր շտաբի պետի տեղակալ էր մշակույթի եւ քարոզչության հարցերով:

Տես # էջ 5

## Ֆրանսիայի ընտրությունների առաջին փուլում ձախակողմյանները հաջողության հասան

26 ՄԱՅԻՍ, BBC, RFI: Երեկ Ֆրանսիայում կայացած խորհրդարանական ընտրությունների առաջին փուլն ավելի անհաջող էր վարչապետ Ալեն Ժյուպեի համար, քան կարելի էր ենթադրել հարցախույզներից: Կառավարությունը զիջեց ընդդիմադիր ձախակողմյան կուսակցություններին, ընդ որում աջակողմյան կուսակցությունները ստացան քվեների ամենացածր տոկոսը՝ սկսած 1978 թվականից: Ձախ ուժերը՝ ներառյալ կոմկուսը, ստացան ձայների 40,2 տոկոսը, բարելավելով նախորդ՝ 93 թվականի ընտրությունների իրենց արդյունքը 10 կետով: Աջակողմյան ազատական կուսակցությունների թեկնածուների օգտին քվեարկեց ընտրողների 36,5 տոկոսը միայն: Աջ ծայրահեղականները՝ ժան Մարի լը Պենի ճակատը, ստացավ քվեների 15 տոկոսը, եւ հաջորդ կիրակի օրը տեղի ունենալիք ընտրությունների երկրորդ փուլում նրանց ընտրողների ձայները կարող են որոշիչ դեր խաղալ: Լը Պենն այսօր պետք է հայտնի, թե իր կողմնակիցները երկրորդ փուլում ում օգտին են քվեարկելու: Այսօր ֆրանսիական սոցիալիստների առաջնորդ Լիոնել Ժոսպենը հայտարարեց, թե հնարավոր է, որ խորհրդարանում ձախերը մեծամասնություն ստանան: Իսկ վարչապետ Ալեն Ժյուպեն քվեարկությունների արդյունքը գնահատեց որպես նախազգուշացում կառավարությանը եւ ընդունեց նախագահ Ժակ Շիրակի կողմից իրեն պաշտոնազուրկ անելու հնարավորությունը:

## Իրանը Թուրքիայից կրկին պահանջեց հանել զորքերը

26 ՄԱՅԻՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: ԻՈՆԱ լրատվական գործակալությունը հաղորդեց, որ Թեհրանում Թուրքիայի հավատարմատարը կանչվել է Իրանի արտգործնախարարություն, եւ նրան է հանձնվել Իրանի բողոքն ու հյուսիսային Իրաքում թուրքական ռազմական ներկայության նկատմամբ Իրանի անհանգստության մասին հայտարարությունը: Իրանի արտգործնախարարության խոսնակ Մահմուդ Մուհամեդին ավելի վաղ կոչ էր արել Թուրքիայի բանակին թողնել Իրաքի սահմանները առանց որեւէ նախապայմանի:

## Էրբաքանը տեղի է տալիս

Անկարայում տեղի ունեցավ Թուրքիայի բարձրագույն ռազմական խորհրդի հատուկ նիստ, ինչարկվեցին զինված ուժերում իսլամական ծայրահեղականների դեմ տարվելիք պայքարի ձեւերը: Նիստից հետո հրապարակված հայտարարագրում ասվում է, թե խորհուրդը համապատասխան որոշում է կայացրել: Ըստ BBC-ի թղթակցի, դա նշանակում է, որ վարչապետ Էրբաքանը համաձայնվել է կատարել բարձրագույն հրամանատարական կազմի պահանջը՝ հեռացնել բանակի բոլոր այն սպաներին, որոնք համակրանքով են վերաբերվում իսլամական ծայրահեղականներին:

BBC

ՀՈԲԵԼՅԱՆ

## Շնորհավորանքներ Ֆրունզե Դովլաթյանին

Թանկագին Ֆրունզե Դովլաթյան

Ուրանց շնորհավորում ենք Ձեզ ծննդյան 70-ամյակի առթիվ: Աղերելով ստեղծագործական բեղմնա-

վոր կյանք, Դուք հայ մշակույթի այն երախտավորներից եք, ում շնորհիվ հայկական կինոն վերականգնեց իր բարի համբավը համաշխարհային էկրանի վրա: Ձեր ստեղծած ֆիլմերը ոչ միայն խորհրդային կինոյի պատմության նշանավոր էջերից են, այլեւ համաշխարհային կինոյի նոր ավանդույթների իսկական ստեղծագործություններ:

Մեծ է Ձեր ավանդը հասարակական կյանքում: Շուրջ չորս տարի Դուք ղեկավարում եք Հայաստանի Թեհրանյան մշակութային միությունը, ակտիվորեն մասնակցում ազգանվեր բազմաթիվ գործերի, ինչն ըստ արժանվույն գնահատվել է հասարակայնության կողմից եւ Հայրենիքում, եւ Սփյուռքում:

Մաղթում ենք Ձեզ, սիրելի Ֆրունզե Դովլաթյան, հաջառողջություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ եւ երկար կյանք:

Հայաստանի Թեհրանյան մշակութային միություն
Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցություն
«Ազգ» օրաթերթի խմբագրություն
«Պայքար» ամսագրի խմբագրություն

ԱԶԳ

# տեղական

ՄԱՅՐ ԱԹՈՌ

## Ռուս զինվորականները՝ Վեհափառին հյուր

Մայիսի 24-ի շաբաթ օրը Մայր աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Վեհափառ հայրապետն ընդունեց Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի Արտաքին սահմանապահ ջոկատի հրամանատար, գնդապետ Իգոր Նիկիտինին եւ նրան ուղեկցող սպաների ու զինվորների փոքրաթիվ խմբին, որոնք Վեհափառին էին այցելել՝ անձամբ նրան հանձնելու Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակվելու 1700-ամյակի պատվին Երեւանում կառուցվող «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» տաճարի կառուցման համար իրենց հանգանակած գումարը:

Հանձնելով գումարը եւ հուշագիրը, գնդապետ Իգոր Նիկիտինը Վեհափառին տեղեկացրեց, որ իր ղեկավարած ջոկատի ողջ անձնակազմը «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» տաճարի կառուցումը դիտում է իբրեւ Հայաստանի հոգեւոր վերածնության խորհրդանիշ, ինչպես որ Մոսկվայում «Հիսուս Փրկչի» տաճարի կառուցումը Ռուսաստանի վերածնության խորհրդանիշն է: Հեռու լինելով հայրենիքից, ջոկատի անձնակազմը, արձագանքելով իր հրամանատարի նախաձեռնությանը, սիրով մասնակցել է հայկական տաճարի շինարարության համար դրամական հանգանակությանը, համոզված լինելով, որ դրանով իսկ այն կդառնա նաեւ հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ:

Շնորհակալությամբ ընդունելով նվիրատվությունը, Վեհափառ հայրապետն այնուհետեւ սրտագին զրույց ունեցավ գնդապետ Նիկիտինի եւ նրան ուղեկցող զինվորականների հետ, կարեւորեց մեր ժողովուրդների եւ քրիստոնեական երկու եկեղեցիների բարեկամության ու համագործակցության խորացման անհրաժեշտությունը, հետաքրքրվեց ջոկատի գործունեությամբ եւ զինվորների ու սպաների կենցաղով:

«Խոր շնորհակալության եւ բավականության զգացումով այս առավոտ կընդունեմ զիրենք այստեղ, մեր ամենեն բարձր հոգեւոր կենտրոնի մեջ, Ս. Էջմիածին, ընդգծեց Վեհափառը, եւ կգտնեմ, թե ինչպես իրենք քրիստոնեական իրենց հավատին, ռուս ժողովրդի բարեկամության զգացումով այսպիսի մտածում մը ունեցած են: Սա օրինակելի արարք մըն է...»: Այնուհետեւ Վեհափառը նշեց, թե «Քրիստոսի եկեղեցին մեկ է: Տարբեր-տարբեր ազգեր տարբեր-տարբեր ձեւով կարտահայտեն այդ հավատը, բայց հավատը մեկ է՝ մեկ Քրիստոս, մեկ Ավետարան եւ մեկ եկեղեցի... Ռուս եկեղեցին մեզի համար սանկ ոչ թե անուն մըն է, այլ շատ մոտիկ կապ ունեցած ենք իրար հետ... Եվ այն խոսքը, երբ գնդապետն ըսավ, թե ես ինձ իմ տան մեջ եմ զգում Հայաստանում՝ դա ինձ շատ մեծ հաճույք պատճառեց...»:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԺ-ի մայիսի 26-ի նիստում օրակարգը հաստատելուց հետո շարունակեց քննարկվել նախորդ եռօրյայում անավարտ մնացած ՀՀ օրենքի նախագիծը (փոխհամաձայնեցված տարբերակ) ՀՀ բյուջետային համակարգի մասին: Օրենքի նախագիծը սահմանում է բյուջետային համակարգը եւ կանոնակարգում բյուջետային գործընթացը: Նշվում է, որ ՀՀ բյուջետային համակարգը ներառում է պետական եւ համայնքային բյուջեները:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## «Բյուջետային գործընթացի» որոնումներ

ՀՀ համախմբված բյուջեն պետական եւ համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի հանրագումարն է: Ըստ նախագծի, բյուջետային գործընթացը յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեների, դրանց տարեկան հաշվետվության կազմման, քննարկման, հաստատման եւ կատարման ուղղությամբ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով կանոնակարգված գործունեությունն է:

Օրենքի նախագծում սահմանվում են բյուջետային հարաբերությունների կարգավորման հիմունքները, բյուջեների փոխհարաբերությունները ֆինանսական համակարգի մյուս տարրերի հետ, բյուջեների կատարումը, պետական եւ համայնքային բյուջեները, ՀՀ բյուջետային դասակարգումը եւ այլ հասկացություններ:

«ՀՀ պետական բյուջե» գլխում նշվում են բյուջեի եկամուտների աղբյուրները, դրանք են. ա) հարկային եկամուտներ եւ տուրքեր, բ) ոչ հարկային եկամուտներ, գ) եկամուտներ կապիտալի գործառնություններից, դ) մուտքեր պաշտոնական տրանսֆերտներից. հարկային եկամուտներ են ավելացված արժեքի հարկը, акցիզային հարկը, շահութահարկը, եկամտահարկը 90 տոկոսի չափով, գույքահարկը 5 տոկոսի չափով, հողի հարկը 5 տոկոսի չափով, հաստատագրված վճարները, մաքսային տուրքը: Օրենքի նախագծում նշվում են նաեւ բյուջեի ծախսերի ուղղությունները, դրանք են՝ ա) ընդհանուր բնույթի պետական ծառայություններ, բ) պաշտպանություն, գ) հասարակական կարգի պահպանություն եւ անվտանգություն, դ) կրթություն եւ գիտություն, ե) առողջապահություն, զ) սոցիալական ապահովագրություն եւ սոցիալական ապահովություն, է) բնակարանային կոմունալ տնտեսություն, ը) մշակույթ, սպորտ եւ կրոն, թ) վառելիքա-էներգետիկ համալիր, ժ) գյուղատնտեսություն, անտառային եւ ջրային տնտեսություն, ձկնաբուծություն, ի) լեռնահանքային արդյունաբերություն եւ հանքային հանածոներ վերամշակող արդյունաբերություն, շինարարություն եւ բնապահպանություն, լ) տրանսպորտ եւ կապ, ճանապարհային տնտեսություն: ՀՀ բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի նախագծի քննարկումը կշարունակվի ԱԺ-ի այսօրվա նիստում:

Ն. Մ.

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

## «Մեր հարաբերություններում մենք հաղթահարել ենք որոշակի լճացման ժամանակաշրջանը»

*Ասում է Ուկրաինայի Գերագույն ռադայի նախագահ Ալեքսանդր Մորոզը*

Պաշտոնական այցով Հայաստանում է գտնվում Ուկրաինայի Գերագույն ռադայի պատվիրակությունը նախագահ Ալեքսանդր Մորոզի գլխավորությամբ: Մայիսի 26-ին Ալ. Մորոզը ելույթ ունեցավ ՀՀ Ազգային ժողովում: Անդրադառնալով հայ եւ ուկրաինացի ժողովուրդների դարավոր կապերին, Մորոզը նկատեց, «պատմության նոր փուլում եւս մեր ժողովուրդների ճակատագրերը սերտորեն միահյուսվում են»: Նա ավելացրեց, որ «մեր երկրների հարաբերություններում մենք հաղթահարել ենք որոշակի լճացման ժամանակաշրջանը»: Ուկրաինայի Գերագույն ռադայի նախագահն անհրաժեշտ համարեց նկատել, որ «համագործակցության այն հսկայական ներուժը, որն ունեն մեր պետությունները, ցավոք, մինչեւ այժմ պատշաճ ձեւով չենք օգտագործում, մանավանդ տնտեսության ոլորտում», միաժամանակ Ալ. Մորոզն ավելացրեց, որ «Ուկրաինան եւ Հայաստանը փոխադարձաբար շահագրգռված են միմյանց արտադրանքով»: Մորոզն ընդգծեց, որ «բարեկամությունը որեւէ մեկի հետ ընդդեմ մեկ ուրիշի մեր սկզբունքը չէ: Մենք պատրաստ ենք քննարկել ամեն տեսակ առաջարկություն, նախագիծ ու համաձայնագիր նաեւ հայկական կողմից»: Մորոզը կարեւորեց տարածաշրջանի տնտեսական բարգավաճման խնդիրը: «Մեր կարծիքով, ճգնաժամերը կարող են լուծվել միայն բանակցությունների ճանապարհով՝ փոխադարձ հարգանքի եւ միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքի հիման վրա»:

Վերջում Ալ. Մորոզը հույս հայտնեց, որ հայ-ուկրաինական համագործակցության ողջ ներուժը կյանքի կկոչվի:

Ն. Մ.

ԱՐՄԵՆՊՐԵՍ

## Ադրբեջանը փաստորեն հրաժարվել է Լեռնային Ղարաբաղից

«Ադրբեջանը փաստորեն հրաժարվել է Լեռնային Ղարաբաղից. 1991 թ. հոկտեմբերի 18-ին ընդունելով Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության մասին սահմանադրական ակտը, որը շարունակում է 91-ի օգոստոսի 31-ին ընդունված Ադրբեջանի անկախության մասին հռչակագրի գաղափարները»: Այդ մասին «Ազգ»-ի թղթակցին ասաց «Իրավունքն ընդդեմ բռնության» ծրագրի ղեկավար, պատանդների պաշտպանության հիմնադրամի խորհրդի անդամ, պրոֆեսոր Ալեքսանդր Մանասյանը: Նրա խոսքերով, այդ ակտում Ադրբեջանը վճռականորեն ամրագրում է միութենական ժառանգությունից իր հրաժարումը: Ադրբեջանական ԽՍՀ կազմավորումը հիշյալ փաստաթղթում դիտվում է իբրեւ Ռուսաստանի «զինված ագրեսիայի, անեքսիայի եւ բռնազավթման հետեւանք»: Խորհրդային Միության կազմավորման մասին 1922 թ. պայմանագիրը զավթողական է համարվում եւ «ստորագրման պահից անվավեր Ադրբեջանին վերաբերող մասով»: Պրոֆեսոր Մանասյանի վկայությամբ, հիշյալ ակտում հաստատվում է, որ «Ադրբեջանը 1918 թ. մայիսի 28-ից մինչեւ 1920 թ. ապրիլի 28-ը գոյատեւած Ադրբեջանական հանրապետության լիիրավ իրավահաջորդն է»: Այդպիսով, 1920 թ. ապրիլի 29-ից 1991 թ. օգոստոսի 30-ի ժամանակահատվածում ընդունված խորհրդային բոլոր օրենքները պաշտոնական Բաքվի կողմից անվավեր են համարվում:

«Այլ կերպ ասած, անվավեր է ճանաչվում նաեւ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմ մտցնելու վերաբերյալ 1923 թ. բոլշեւիկյան որոշումը, ինչից հետեւում է այն եզրակացությունը, որ Ադրբեջանը հրաժարվում է ԼՂՀ նկատմամբ տարածքային պահանջներից», վերջում նշեց Ալեքսանդր Մանասյանը:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

## ԼՂՀ ղեկավարն ընդունեց ՀՅԴ Բյուրոյի անդամներին

Օրերս ԼՂՀ նախագահի պաշտոնակատար, հանրապետության վարչապետ Լեւոնարդ Պետրոսյանն ընդունեց ՀՅԴ Բյուրոյի անդամներ Մարտուն Մաթեւոսյանին, Աբո Պողիկյանին, ԼՂՀ-ում ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Սերժ Ամիրխանյանին եւ Արցախի ՀՅԴ կենտկոմի ներկայացուցիչ Վաչագան Ջաֆարյանին:

ԼՂՀ կառավարության մամուլի ծառայության հաղորդման համաձայն, հանդիպման ընթացքում զրույցը հիմնականում ծավալվեց միջազգային եւ տարածաշրջանային հիմնախնդիրների վերաբերյալ միասնական դիրքորոշում մշակելու նպատակով արտաքին քաղաքական հարցերում ԼՂՀ իշխանությունների եւ Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության համագործակցության ուղիների շուրջ: Նույն աղբյուրի համաձայն, քննարկելով ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի ներկա վիճակը, զրույցի մասնակիցները համակարծիք էին, որ անհրաժեշտ է համայն հայության էլ ավելի մեծ համախմբվածություն հանուն արցախյան խնդրի արդարացի լուծման:

Վ. Ա.

## ՀՅԴ բռնագրավված գույքը վերադարձվում է, սակայն...

ԵՐԵՎԱՆ, 26 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ Մեկ շաբաթից ավելի է, ինչ սկսվել է 1994 թ. դեկտեմբերի 28-ից հետո ՀՅԴ բռնագրավված գույքի վերադարձը: Վերադարձվում են համակարգիչներ եւ տեխնիկական այլ միջոցներ: Առայժմ վերադարձվել է գույքի ոչ մեծ խմբաքանակ, սակայն գործընթացը շարունակվում է:

Ինչպես հայտնեցին ՀՅԴ Գերագույն մարմնի (ԳՄ) գրասենյակից, հիշյալ գործընթացը բնական է եւ ինքնին ողջունելի, սակայն ուղղակիորեն չի կապվում Դաշնակցության վերաբացման եւ ՀՅԴ-ին առնչվող ամբողջական հարցերի լուծման հետ:

## Դադարել են գործել «Հայֆիլմ» եւ «Հայ» կինոստուդիաները

ԵՐԵՎԱՆ, 26 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Հայֆիլմ» եւ «Հայ» պետական կինոստուդիաներում, պետբյուջեով նախատեսված գումարները չհատկացնելու պատճառով, դադարեցվել են աշխատանքները:

Ինչպես ասաց ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Միխայել Սամբոլցյանը, ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկով ՀՀ կառավարությունը կրճատել է կինոյին հատկացվելիք գումարները. առաջին եռամսյակում 2 կինոստուդիաներին տրվել է ընդամենը 19,2 միլիոն դրամ, իսկ երկրորդում՝ նախատեսված 40 միլիոնի փոխարեն՝ զրո:

Մինչդեռ ծրագրված էր ապրիլից վերսկսել նախորդ տարում չավարտված՝ Հարություն Խաչատրյանի «Վավերագրողը» պայմանական վերնագրով ժապավենի, մուլտֆիլմերի, 3 կարճամետրաժ եւ այլ ֆիլմերի աշխատանքները:

«Կինոստուդիաները կվերսկսեն գործել այն ժամանակ, երբ կտրվեն պետականորեն հատկացված միջոցները», ասաց պարոն Սամբոլցյանը:

## Իզմիրյան ամուսիններից ԵՊՀ գրադարանին՝ 1 մլն դոլար

ԵՐԵՎԱՆ, 26 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ Հունիսի սկզբին կկայանա Երեւանի պետական համալսարանի Իզմիրյան ամուսինների անվան (Շվեյցարիա) գրադարանի հայտահանդեսը, որոնք գրադարանին են նվիրաբերել 1 մլն դոլար:

Ինչպես հաղորդեց համալսարանի պրոռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը, այդ գումարի երկու երրորդը ծախսվել է սենյակների նորոգման եւ վերասարքավորման համար, ինչպես նաեւ «Ինտերնետ» ցանցին միանալու՝ գրադարանի կոմպյուտերացման նպատակով:

Ենթադրվում է, որ մնացյալ գումարը կծախսվի գիտական պարբերականների մատակարարման համար, որոնք, է. Ղազարյանի խոսքերով, հույժ անհրաժեշտ են ուսուցման գործընթացի եւ գիտական հետազոտությունների համար:

Սպասվում է, որ Իզմիրյան ամուսինները Հայաստան կժամանեն գրադարանի հայտահանդեսին մասնակցելու համար:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայութիւն / 581841
Apple Macintosh
համակարգչային ծառայութիւն «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetootian st.
Yerevan, Armenia 375010

ՅԱՎԱԿՑՈՒԹԻՒՆ

Մեծայարգ Տիար
Լեւոն Տէր Պետրոսեան, Նախագահ՝
Հայաստանի Հանրապետութեան

Ոամկավար Ազատական Կուսակցութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Կանադայի Շրջանային Վարչութեան կողմէ այսու կու գանք մեր ցաւակցութիւնները յայտնելու Ձեզի եւ Ձեր միջոցով Տէր Պետրոսեան ընտանիքի բոլոր անդամներուն, Ձեր եղբօր՝ Հայաստանի արդիւնաբերողներու եւ գործարարներու միութեան խորհուրդի անդամ, «Հրազդանմաշ» արդիւնաբերական ընկերութեան նախագահ եւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի պատգամաւոր Թելման Տէր Պետրոսեանի անժամանակ մահուան տխուր առթիւ:

Յարգանքներով՝
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՁՈՒՄՆԵԱՆ,
Ատենապետ
ՄԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ,
Ատենադպիր

# ՊՄԲԱԳԻԿ

ԵՐԵՎԱՆ

## Վանո Սիրադեղյանը՝ դպրոցների տնօրենների խորհրդի նախագահ

### Մրցակցություն, թե՞ համագործակցություն

Առիթ ունեցել ենք նշելու Երեւանի քաղաքապետի ընդգծված ուշադրությունը դպրոցական հիմնախնդիրների նկատմամբ: Մայիսի 24-ին կառավարության նիստերի դահլիճում տեղի ունեցած երեւանյան դպրոցների տնօրենների խորհրդակցությունը համայնքների տնօրենների հետ կայացած չորս հանդիպում-խորհրդակցությունների տրամաբանական լուծումն էր, որի արդյունքում Վանո Սիրադեղյանը նոր «դաշտոնի» տեր դարձավ ստեղծվեց երեւանյան տնօրենների խորհուրդ, որի նախագահն ըստ ընդունված կանոնադրության, Երեւանի քաղաքապետն է, համակարգողը քաղաքապետարանի կրթության բաժնի պետը (Սերգեյ Պողոսյանը):

Խորհուրդն, ըստ առաջարկությունների, քննարկում եւ մշակում է քաղաքապետարանին ենթակա կրթական հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեության, ուսուցիչների սոցիալական վիճակի բարելավման, ուսուցման արդյունավետության բարձրացման եւ այլ միջոցառումներ, առաջարկություններ ներկայացնում նախարարությանը կրթական բարեփոխումների վերաբերյալ:

Խորհրդակցությունը վարդետորեն եւ ժողովրդավար կեցվածքով վարում էր քաղաքապետը հանդիպման «ծանրությունը» տեղափոխելով դեպի կրթության նախարար Արտաշես Պետրոսյանը: Վերջինս ներկայացրեց կրթական քաղաքականության «ռազմավարական ուղղությունները», առաջին հերթին ՀԲ-ի հետ համատեղ ծրագրերի վերաբերյալ: Ըստ դարոն Պետրոսյանի, ՀԲ տրամադրելիք 8 մլն դոլարի արտոնյալ վարկը մեկընդմիշտ լուծելու է դպրոցը դասագրքերով ապահովելու խնդիրն ա[illegible] 88-89 ուս. տարվանից: Բաշխման գրադարանային համակարգի շնորհիվ ստացվելիք գումարներ մուտքագրվելու են դպրոցների սեփական հաշիվներում, որ բացվելու են Միդլենդ Արմենիա բանկում եւ օգտագործվելու դպրոցների հայեցողությամբ (ասենք նոր դասագրքեր ձեռք բերելու համար): Եվս 1,5 միլիոն դոլար գրանտների ձեւով հատկացվելու է վերակառուցման հետաքրքիր բիզնես-ծրագիր ներկայացրած դպրոցներին: Դպրոցների ինքնուրույնության աճ, ինքնակազմակերպում, ֆինանսատնտեսական գործունեություն փակ բաժնետիրական ընկերության տարբերակով, դպրոցական համակարգի արդյունավետացում (ուսուցիչների եւ աշակերտների վերաբաշխում կամավոր սկզբունքով) ահա այն ուղղությունները, որ, ըստ նախարարի, կարող են վերականգնել դպրոցական քայքայված տնտեսությունը եւ հնարավորություն տալ բարձրացնելու ուսուցչի աշխատավարձը ընդհուպ 100 դոլար (այս թիվը հուսախաբեռահավաս աշխուժություն առաջացրեց դահլիճում): Դրա համար անհրաժեշտ է համագործակցություն բոլոր օղակներում նախարարություն, քաղաքապետարան, տնօրենների: Այդ տեսակետից նախարարը կարեւորեց տնօրենների խորհրդի ստեղծումը, որի փորձը, հաջողության դեպքում, կարող է տարածվել մարզերում:

Նախարարին ուղղվեցին բազմաթիվ հարցեր դպրոցների մասնավորեցման, կրթահամալիրների ստեղծման, նախարարությունից անկախացած «Դպրոց» թերթի աղագայի, ուսուցիչների ամիսներ շարունակ չվճարվող աշխատավարձերի մասին եւ այլն: Մասնավորապես ասվեց, որ «Դպրոցն» անկախ թերթ է, իսկ նախարարությունն իր թերթը կունենա հանգիստ վերաբերվեք դրան, նկատեց քաղաքապետը): Հարցերի մի մասն ուղղված էր քաղաքապետին, սակայն վերջինս խուսանավեց խոսքանալով դատապարտել «ընթացքում»:

Կրթության բաժնի պետն ընդհանրացրեց նախորդ հանդիպումները եւ տեղեկացրեց «մանկապարտեզ-դպրոց-երաժշտական դպրոց-մարզադպրոց» տիպի կրթահամալիրների ստեղծման ծրագրերի, դպրոցների նյութատեխնիկական բազայի համալրման հեռանկարների, Լիոնից առաքվելիք 200 դպրոցական համակարգիչների մասին: «Հարց չունեք, չէ՞», Պողոսյանին», դատապարտան չդադարեցնող հարցով սահմանափակելով տնօրենների հետաքրքրասիրությունը, դարոն Սիրադեղյանն անցավ «բուն օրակարգին» խորհրդի կազմի ընտրությանը: Ներկայացված 40 թեկնածուներից միակ քվեարկությամբ խորհրդի կազմում ընտրվեցին 14 տնօրեններ, որ քաղաքապետի, կրթության բաժնի պետի եւ «Քվանտ» մասնավոր վարժարանի տնօրեն Ռ. Վարդանյանի հետ կհամալրեն տնօրենների 17 հոգանոց խորհուրդը:

Խորհրդակցության մասնակիցների անունից առաջարկվեց ուսուցչի ծանր վիճակը եւ ակնկալիքներն արձանագրող մի ուղերձ հղել ՀՀ ԱԺ նախագահներին եւ վարչապետին, որը, սակայն, առարկությունների տեղիք տվեց: Տնօրենների մի մասի կարծիքով հղումն անիմաստ է, քանզի «դեկավարությունը շատ լավ գիտի ուսուցչի վիճակը»: Մյուսներն անընդունելի համարեցին ուղերձի այն հատվածը, որ վերաբերում էր կրթության բնագավառը վերջապես «տնօրինելու ընդունակ իմաստուն ղեկավարի»: Վստահելու ցանկությանը զգնելով, որ վերջինս վիրավորական է դարոն Պետրոսյանի համար: Միջադեպը հարթվեց քաղաքապետի «մի տարի առաջ է երեւի կազմվել ուղերձը» կես-լուրջ, կես-կատակ արտահայտությամբ:

Քաղաքապետը, շնորհավորելով նոր կառույցի ստեղծումը, հայտնեց հեռագայում հայերենի ուսուցիչների ժողով հրավիրելու եւ համադասական հասարակական կազմակերպություն ստեղծելու իր մտադրությունը: «Կաշխատեմ նախագահը չլինել», կատակեց նա:

Ի՞նչը կգերակշռի «խորհուրդ-նախարարություն» հարաբերություններում, մրցակցությունը, թե՞ համագործակցությունը, ցույց կտա ապագան: Երկու դեպքում էլ, կարծում ենք, կշահի կրթությունը:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

## Մայիսի 30-ը՝ ալկոհոլի նվազագույն քանակով, խորհուրդ է տալիս քաղաքապետը

Վերջին զանգի օրը՝ մայիսի 30-ին, ավարտական միջոցառումներ կանցկացվեն երեւանյան համայնքներում, իսկ երեկոյան ժամը 5-ից հետո ըստ ավանդույթի, հանրապետության հրապարակում: Համերգային-զվարճալի ծրագրի հավանական սկիզբը ժամը 18-ն է, ասաց քաղաքապետարանի կրթության բաժնի պետ Սերգեյ Պողոսյանը մայրաքաղաքի դպրոցների տնօրենների շաբաթ օրվա խորհրդակցության ընթացքում: Ի դասախոսան այն հարցի, վերջին զանգի «կենտրոնացված» տոնակատարություն լինելո՞ւ է, թե՞ ոչ: Քաղաքապետ Վանո Սիրադեղյանը, լրացնելով կրթության բաժնի պետին, ավելացրեց, «Խորհուրդ տվեք իրենց, շատ են խմում տղաները»: Հուսով ենք, տղաները հավի կառնեն քաղաքապետի կարծիքը՝ բացառելով անախորժ միջադեպերը երեւանի թիվ մեկ հրապարակում:

Լ. Պ.

## Միացեալ հայկական ֆոնդը իր 92-րդ թռիչքով 7,3 միլիոն դոլարի աղրանք ուղարկեց Հայաստան

*Մամուլն արդեն տեղեկացրել է Միացյալ հայկական ֆոնդի հերթական օժանդակության 92-րդ թռիչքի մասին, սակայն, որոշ անճշտություններով, մասնավորապես, թե իբր բեռը Երեւան է բերվել ռազմական ինքնաթիռով եւ այլն: Թռիչքի եւ օժանդակության վերաբերյալ ստույգ տեղեկություններ է տալիս Միացյալ ֆոնդի գրասենյակի հաղորդագրությունը:*

ԳԼԵՆԴԵՅԼ. Միացեալ հայկական ֆոնդի 92-րդ օդանաւը երեւան հասաւ մայիս 11-ին՝ փոխադրելով 7,3 միլիոն դոլար արժողութեամբ մարդասիրական օժանդակութիւն: Օդանաւը ամբողջութեամբ բեռնաւորուած էր 72.000 փաունտ կշռող դեղորայքով եւ բժշկական պիտոյքներով, որոնք նուիրուած էին Connecticut նահանգի AmeriCares ընկերութեան կողմէ:

DC-8 բեռնաւար օդանաւը առաջին ոչ ռազմական թռիչքը կատարեց New Hampshire նահանգի Portsmouth քաղաքի մօտ գտնուող Pease օդակայանէն, որը նախապէս կը պատկանէր Ամերիկեան օդոյժին: Այդ իսկ հանգամանքով, Միացեալ հայկական ֆոնդի այս թռիչքը մասնաւոր ուշադրութեան արժանացաւ օդակայանի պաշտօնաթարներուն եւ տեղական մամուլին, որոնք բաւական սպառիչ թղթակցութիւն կատարեցին Հայաստան մեկնող այս օդանաւին մասին:

Այս թռիչքին կ'ընկերակցէին Միացեալ հայկական ֆոնդէն՝ Մարալ Չալեան, AmeriCares ընկերութենէն՝ Alon Marom եւ Հարվըrs համալսարանէն՝ Dr. Karin Dumbaugh: Անոնք Հայաստանի մէջ մի քանի հիւանդանոցներուն այցելութիւններ տուին, վստահ ըլլալով որ տարուած աղրանքները կատարեալ ձեւով կը բաշխուին եւ կը գործածուին ըստ արժանւոյն: Dr. Dumbaugh կը կատարէ ուսումնասիրութիւն մը, գնահատելու համար Ամերիկեան դեղագործական եւ այլ բարեսիրական ընկերութիւններուն կողմէ զարգացող երկիրներում, (որոնց շարքին Հայաստանին) տրուած դեղորայքի օգտակարութեան մասին:

Այս թռիչքին մասին արտայայտուելով, Միացեալ հայկական ֆոնդի վարիչ տնօրէն Յարութ Սասունեան ըսաւ, «Կը փափաքիմ իմ մասնաւոր գնահատանքս յայտնել AmeriCares ընկերութեան, իր կատարած 7,3 միլիոն դոլար արժողութեամբ առատաձեռն օժանդակութեան համար, որուն շնորհիւ առաքուած դեղորայքն ու բժշկական պիտոյքները մեծապէս պիտի նպաստեն Հայաստանի ժողովուրդին»:

Միացեալ հայկական ֆոնդը՝ 1989-էն ի վեր՝ 182 միլիոն դոլարի մարդասիրական օգնութիւն հայթայթած է Հայաստանին, 92 թռիչքներով եւ 250 ծովային բեռնարկղներով:

Միացեալ հայկական ֆոնդը միացեալ ծիգի արդիւնքն է հայկական համախմբումին, ՀԲԸՄիութեան, ՀՕՄ-ին, Ամերիկայի հայ աւետարանական ընկերակցութեան, Ամերիկայի Հայց. եկեղեցւոյ, Ամերիկայի Հայց. առաքելական եկեղեցւոյ եւ Լինսի հիմնարկին:

Յաւելեալ ծանօթութիւններու համար հեռաձայնել Միացեալ հայկական ֆոնդի գրասենեակը՝ (818) 241-8900 թիւին:

## Լոս Անջելես. Գիտաժողովը խուսափեց հնարավոր սադրանքից

Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանում Հայ կրթական հիմնարկության հաստատած հայ ժողովրդի արդի պատմության ամբիոնի եւ նույն համալսարանի Գրիգոր Նարեկացու անվան Հայկական հետազոտությունների ամբիոնի կազմակերպությամբ մայիսի 17-ին եւ 18-ին տեղի ունեցավ գիտաժողով (որի մասին նախապես տեղեկատվեր էր «Ազգ» մայիսի 6-ի համարում-խմբ.) նվիրված պատմական Հայաստանի քաղաքներից Վան-Վասպուրականին, որը ներկայիս բնակեցված է թուրքերով:

Օքսֆորդ, Սորբոն, Կոլումբիա, Կալիֆոռնիայի պետական համալսարաններից եւ Կահիրեի գերմանական հնագիտական ինստիտուտից հրավիրված անվանի գիտնականներ զեկուցումներ կարդացին Վանի նահանգում վաղ շրջանից մինչեւ մեր դարի սկզբները հայերի գոյության մասին: Գիտնականները, որոնցից շատերը օտարներ էին, պատմության, գրականության, լեզվաբանության, արվեստի եւ ճարտարապետության հմուտ մասնագետներ էին:

Մ. Նահանգների պետքարտուղարության հրապարակած ներքին շրջաբերականի համաձայն, Վաշինգտոնի թուրքական դեսպանությունը հրահանգել էր Լոս Անջելեսի թուրք հյուպատոսին ներկա գտնվելու այդ գիտաժողովին՝ «հայկական կեղծարարություններին հակահարված տալու միտումով»: Հետաքրքիր է, որ գիտաժողովը կազմակերպողները հրավիրել էին Մասաչուսեթսի համալսարանից պրոֆ. Կլայվ Ֆոսին, որը ներկայացրեց թուրք պատմաբանների աղավաղումները հայկական Վանի մասին: Թուրք կառավարությունը կարիք չուներ մի երկրորդական կարգի դիվանագետ ուղարկելու գիտաժողովին: Միեւնույն է, նա չէր կարողանալու հերքել այնտեղ արտասանված բառերից եւ ոչ մեկը: Ընդհանուր հյուպատոս Հայրի Հայրեթ Յալավի ներկայությունը ծառայեց միայն էլ ավելի սրելու Լոս Անջելեսի հայկական համայնքի եւ թուրք կառավարության միջեւ արդեն գոյություն ունեցող լարվածությունը: Գիտաժողովից երկու օր առաջ թուրք դիվանագետի անվտանգությունը ապահովելու նպատակով պետքարտուղարությունը որոշեց մեծաղոր սիլ սարքեր տեղադրել դահլիճի մուտքում, ստուգել մարդկանց պայուսակները, տեղակայել մեծ թվով հակահետախուզության աշխատակիցներ, Լոս Անջելեսի ոստիկանության խուզարկուներ, հակահաբեկչական միավորումների անդամներ, Կալիֆոռնիա համալսարանի ոստիկանության պաշտոնյաներ, ինչպես նաեւ կարգավորել թուրք դիվանագետի անձնական թիկնապահի ներկայությունը: Լոս Անջելեսի ոստիկանությունը համալսարանի ղեկավարությանը տեղյակ պահեց նաեւ այն մասին, որ մոտ 300 թուրքեր հնարավոր է ցույց կազմակերպեն շենքի առաջ՝ գիտաժողովի անցկացման ժամանակ:

Այս բոլորը հաշվի առնելով եւ հարակից վայրում անցկացվող հանգանակության մի այլ միջոցառմանը չխանգարելու նպատակով համալսարանի ղեկավարությունը որոշեց վերջին րոպեին գիտաժողովը անցկացնել ոչ թե նախապես հայտարարված Ոոլֆ Հոլ դահլիճում, այլ Դիկսոն լսարանում, առաջացնելով անտեղի խառնաշփոթ:

Իհարկե, կազմակերպիչների կողմից թուրք հյուպատոսի ներկայության ոչ մի առարկություն չկար: Նրանք պատշաճ ընդունելության արժանացրին հյուպատոսին եւ պատրաստ էին ցանկության դեպքում առիթ տալ արտահայտվելու հարց ու պատասխանի ժամանակ: Նրանք սակայն չէին կարող իրենց վրդովմունքը չարտահայտել ստեղծված այն իրավիճակի համար, երբ ներկաները, նրանց թվում նաեւ Հայաստանի ընդհանուր հյուպատոսը, ստիպված էին անցնել մետաղորսիչ սարքերի միջով եւ ստուգվել հակահետախուզության աշխատակիցների կողմից, ինչը ակադեմիական մակարդակի գիտաժողովը վերածում էր ռազմական մի կայազորի: Հայերից շատերի համար չափազանց նվաստացուցիչ էր այն, որ ելեռնից ավելի քան 80 տարի անց, ամերիկյան հողի վրա եւ համալսարանական կրթօջախում նրանք նման վերաբերմունքի էին արժանանում դարձյալ թուրքի պատճառով:

Ուշագրավն այն է, որ ինչպես տեղեկացա, պետքարտուղարությունը փորձել էր չխրախուսել գիտաժողովին իրենց տեղական հյուպատոսին ուղարկելու թուրքական դեսպանատան նախաձեռնությունը, բայց անհաջողության էր մատնվել եւ ստիպված էր եղել անվտանգության համապատասխան միջոցներ ձեռնարկել: Ես չեմ մեղադրում թուրք ընդհանուր հյուպատոսին: Նա իր կառավարության պատշտոնյաներից է եւ ստիպված է կատարելու իր վերադասների կարգադրությունը: Ինչպես բոլոր թուրք դիվանագետները, նա եւս շատ համակրելի էր եւ ընկերական: Ես առիթ ունեցա մի քանի բառ փոխանակելու նրա հետ գիտաժողովի ընդմիջումներից մեկի ընթացքում: Նա շատ սիրալիր էր եւ պատրաստակամ՝ զրուցելու հայկական համայնքի հետ:

Կարծում եմ, թուրքական կառավարությունը կրակի հետ էր խաղում՝ նրան ուղարկելով գիտաժողով: Նրանց նպատակը սադրիչ իրադրություն ստեղծելն էր, որը կարող էր միջադեպի առիթ դառնալ: Ինչքան էլ այդ միջադեպը փոքր լիներ, նրանք մեծացնելով այն՝ կարող էին բոլոր հայերին պիտակավորել որպես ահաբեկիչների: Բայց հայերը չենթարկվեցին սադրանքի: Թուրք ընդհանուր հյուպատոսին նրանք ընդունեցին քաղաքավարի եւ պատշաճ հարգանքով: Թուրքերի խորամանկ քայլը ծառայեց պարզապես իրենց դեմ գրգռելու ոչ միայն հայ համայնքի, այլ նաեւ օտար գիտնականների եւ Կալիֆոռնիա համալսարանի պաշտոնյաների զգացմունքները: Իրականում հյուպատոսի ներկայությունը ծառայեց հայերի հանդեպ թուրքական անարդարությունների մասին ակադեմիական զեկուցումները դնելու պատմական կոնտեքստի մեջ: Վերջում հայ գիտնականներից մեկի առարկությունը ձեռնարկված անվտանգության հատուկ միջոցառումներին որոշընդոտս ծափերով ընդունվեց դահլիճի կողմից՝ ի դառնություն ընդհանուր հյուպատոսի: Պարզվեց, որ ենթադրյալ ցույցը բլեֆ էր եւ նպատակ ուներ միայն սասկացնելու անվտանգության միջոցառումները: Հուսով եմ՝ ապագայում Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանն ու այլ հաստատություններ ներառյալ պետքարտուղարությունը, ավելի խորը կներթափանցեն թուրքական նման սադրանքների էության մեջ եւ անտեսելով հավակված հարցերը չեն ծախսի նրանց ձեռնարկած վտանգավոր խաղերի վրա:

ՏԱՐՈՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Կալիֆոռնիա կուրիեր

ԱԶԳ

# հարցազրույց

# Գառնիկ Նանագուլյան. «Նախ պետք է կարգի բերենք մեր տունը՝ կառավարությունը»

## Նախաձեռնությունների համագործակցության մեխանիզմները ճշտված չեն

*Արդեն կես տարուց ավելի Հայաստանի առեւտրի սպասարկումների եւ զբոսաշրջիկության նախարարությունը ղեկավարում է Կանադայում Հայաստանի նախկին դեսպան Գառնիկ Նանագուլյանը: Այս ընթացքում նախարարությունը արդեն հասցրել է որոշ ծրագրեր մշակել, իսկ թե ի՞նչ կոնկրետ գործեր են կատարվել, այս հարցով սկսեցինք մեր հարցազրույցը նախարարի հետ:*

**– Ս**եր առջեւ դրված հիմնական խնդիրը ոչ թե այս նախարարության նեղ գործունեությունն է, այլ թե ինչպես են համագործակցում տնտեսական ոլորտի նախարարությունները եւ ինչպես են նրանք անդրադառնում հանրապետությունում առկա խնդիրներին: Իսկ այդ խնդիրները բավականին լուրջ են: Տնտեսության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել, նոր մասնավոր սեկտոր է ստեղծվել, իսկ կառավարության կառուցվածքում լուրջ փոփոխություններ տեղի չէին ունեցել: Այնպես որ հիմնականում ուշադրություն էինք դարձնելու այն կառուցվածքներին, որոնք պետք է համապատասխանեին նոր իրողություններին մեր համակարգում առաջացվեր սեփականաշնորհման ծրագիրը: Մենք խնդիր ենք դրել, որ մինչեւ այս տարվա հուլիսի վերջը ավարտենք սեփականաշնորհման ընթացքը, քանի որ անհեթեթություն է այս պայմաններում պետական առեւտրի ձեռնարկություններ ունենալ: Փորձը ցույց է տալիս, որ դրանք միայն վնասով են աշխատում, եւ դա այդպես էլ պետք է լիներ:

Իր ծավալով դա ընդհանուր առեւտրի մինչեւ 5 տոկոսն է կազմում: Իհարկե, մենք ինքնուրույնություն ենք տվել նրանց, բայց դա շաղկապված է տարբեր հրահանգներով: Մենք պետք է փորձեինք նաեւ սեփականաշնորհման մեջ նոր տարրեր ներմուծել, որը թույլ տար սեփականաշնորհումից հետո աշխատեցնել այդ ոլորտը: Երրորդ ուղղությունը զբոսաշրջիկությունն էր: Պետք է հաշվի առնել, որ տնտեսության այդ սեկտորը մեծ աղագա ունի Հայաստանում: Մենք դիմեցինք մի շարք միջազգային կազմակերպություններին, UNDP-ին, որպեսզի տեխնիկական օգնություն ցույց տան: Այժմ սերտորեն համագործակցում ենք միջազգային տուրիստական կազմակերպության հետ (WTO), եւ մոտ ապագայում սպասվում է նրանց առաջին առաքելության այցը Երեւան: Նպատակը Հայաստանի անդամակցությունն է այդ կազմակերպությանը, եւ հնարավոր է, որ դա լինի այս տարի: Մշակվում է եւ վերջնական փուլում է գտնվում ազգային տուրիզմի զարգացման ծրագիրը, ինչպես նաեւ տուրիզմի մասին ՀՀ օրենքը, մասնավոր տուրիստական գործակալությունների գործունեության կանոնակարգումն ու լիցենզավորումը: Փորձում ենք նաեւ երկխոսություն սկսել մասնավոր սեկտորի ներկայացուցիչների հետ եւ վերը նշված ծրագրերը կազմելիս հաշվի ենք առել նաեւ նրանց կարծիքը: Սակայն պետք է նշեմ, որ այսօր մեր մասնավոր սեկտորը բավականին թույլ է, եւ լուրջ օգնության կարիք ունի: Դրա հետ մեկտեղ մի շարք օտարերկրյա տուրիստական ընկերությունների հետ բանակցություններ ենք վարում, որպեսզի վերականգնենք Հայաստան եկող զբոսաշրջիկին: Ի վերջո, նա նույնը չէ, ինչ-որ Փարիզ կամ Լոնդոն գնացողը: Մենք մեր յուրահատկություններն ունենք, եւ լավը եւ բացասականը: Մենք չունենք այն ենթակառուցվածքը, որն ի վիճակի է ընդունելու գեղեցիկ ու հարմարավետ հյուրանոցներ փնտրող զբոսաշրջիկներին:

Աշխարհում կա նաեւ ինտելեկտուալ զբոսաշրջիկ, որը գնում է ուսումնասիրելու ոլորտությունը, նարտարապետությունը, բնությունը: Հետաքրքիր, մենք պետք է աշխատանք տանենք այդ ուղղությամբ: Անկախությունից հետո առաջին անգամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ UNDP-ի հետ համատեղ Հայաստանին նվիրված մի ալբոմ-գիրք ենք պատրաստում, որը երեւի թե սեպտեմբերին պատրաստ կլինի, եւ այլեւս վրան գրված չի լինի «Սովետական Հայաստան»:

Բացի այդ, Երեւանի երեք հյուրանոցները «Անին», «Դվինը» եւ «Արմենիան» ներկայացվում են միջազգային մրցույթի, որի մասին կհայտարարվի մոտ օրերս: Պայմանները բավականին խիստ են, քանի որ նպատակն է բարձրացնել այդ հյուրանոցների մակարդակը ստանալով նոր ներդրումներ:

Հյուրանոցները կվաճառվեն օտարերկրյա այն ընկերությանը, որն իր հետ կբերի արեւմտյան հյուրանոցների հաստատուն դեկավարում ունեցող մի ընկերության (օր. Հիլտոն եւ այլն): Պայմանները կտպագրվեն բերքերում:

**– Ձեր աշխատանքներում առաջնահերթությունները չափազանց շատ է, եւ աշխատանքի բաժանումն էլ անհիմն է: Ոչ մեկը երբեւիցե չի մտածել այն մասին, որ նույնիսկ այս գործող համակարգում մեխանիզմներ կան, որոնց օգնությամբ կարող է բյուրոկրատական շղթան շրջանցել: Իմ կարծիքով, դա կարելի է լուծել միայն մի ճանապարհով, եթե կարգի բերենք մեր տունը՝ կառավարությունը: Տնտեսական ոլորտի հարցերով զբաղվող բազմաթիվ նախարարությունների առկայությունը ավելորդ է: Այսօր գոյություն ունեն է-կոնոմիկայի, արդյունաբերության, առեւտրի, սեփականաշնորհման եւ օտարերկրյա ներդրումների նախարարություններ, այլ կառուցվածքներ: Այսինքն, հսկայական համակարգ է, որը զբաղվում է մի գործով, որպեսզի ներքին արտադրողը իր բողարկած ապրանքը կարողանա արտահանել: Դա հսկայական բյուրոկրատական համակարգ է, որը պետք է փոխվի:**

**Երկրորդ, արտգործնախարարությանը հետ համագործակցությունը կարեւորում եմ, եւ դա կարելի է անել մի քանի ձեւերով: Արտաքին տնտեսական հարցերի հիմնական ուղղվածությունը տալիս է ազգային անվտանգության խորհուրդը: Դրանից հետո պետք է զբաղվենք նոր շուկաների գրավմամբ եւ հների վերականգնմամբ: Դրա համար արտահանող ապրանքների տեսականին պետք է ավելացվի: Չէ՞ որ կորցրել ենք մեր շուկաները: Սակայն մեր ներքին պոտենցիալը բավարա՞ր է, որպեսզի միջազգային ստանդարտներին համապատասխանող արտադրանք տանք: Անձնական կարծիքս է՝ ոչ:**

**Այսօր եզակի երեւույթներ կան, որոնք կարող են շուկայի պայմաններում զարգանալ, արտադրանք տալ, բայց այդ արտադրանքը արտաքին շուկայում մրցակցություն չի կարող ունենալ: Դա նշանակում է, որ կառավարությունը բավականին ակտիվ դեր պետք է ունենա, որպեսզի օգնի մեր արտադրողին, իհարկե առանց խառնվելու շուկայի գործերին, կանխագուշակելով շուկայի մրցունակության արդյունքները:**

**Այսինքն, արտադրողին պետք է կողմնորոշել դեպի իրական շուկաներ եւ օգնել նոր տեխնոլոգիաների**



**ներդրման հետ համագործակցությունը կարեւորում եմ, եւ դա կարելի է անել մի քանի ձեւերով: Արտաքին տնտեսական հարցերի հիմնական ուղղվածությունը տալիս է ազգային անվտանգության խորհուրդը: Դրանից հետո պետք է զբաղվենք նոր շուկաների գրավմամբ եւ հների վերականգնմամբ: Դրա համար արտահանող ապրանքների տեսականին պետք է ավելացվի: Չէ՞ որ կորցրել ենք մեր շուկաները: Սակայն մեր ներքին պոտենցիալը բավարա՞ր է, որպեսզի միջազգային ստանդարտներին համապատասխանող արտադրանք տանք: Անձնական կարծիքս է՝ ոչ:**

**Այսօր եզակի երեւույթներ կան, որոնք կարող են շուկայի պայմաններում զարգանալ, արտադրանք տալ, բայց այդ արտադրանքը արտաքին շուկայում մրցակցություն չի կարող ունենալ: Դա նշանակում է, որ կառավարությունը բավականին ակտիվ դեր պետք է ունենա, որպեսզի օգնի մեր արտադրողին, իհարկե առանց խառնվելու շուկայի գործերին, կանխագուշակելով շուկայի մրցունակության արդյունքները:**

**Այսինքն, արտադրողին պետք է կողմնորոշել դեպի իրական շուկաներ եւ օգնել նոր տեխնոլոգիաների ներդրումներ բերել, որպիսիներ մեր ներքին ֆինանսական ոլորտը զարգացման համար բավարար չեն: Եվ ամենակարեւորը, կառավարման (մենեջմենթի) ոլորտն է, որը այսօր մեզանում, ցավոք սրտի, գոյություն չունի: Սակայն, նախարարությունների միջեւ համագործակցության արդյունավետությունը մեծանում է օտարերկրյա ներդրումներ բերելու մեջ: Դա կարելի է անել հետեւյալ ձեւով: Եթե օրինակ որեւէ տնտեսական նախարարության հովանու տակ ստեղծվի ներդրումների գրավման եւ արտահանման խրախուսման ազգային խորհուրդ, որի մեջ կներգրավեն արտգործնախարարի, ֆինանսների, արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության, կապի եւ այլ նախարարությունների փոխնախարարների եւ կմշակեն սկզբունքային այլ առաջնային ծրագիր, որոնք կառավարությունը ի վիճակի է իրականացնել: Եվ երկրորդը՝ կճշտվեն ֆունկցիոնալ ծրագրերը: Դա կդառնա այն համակարգող խորհուրդը, որն էլ կմշակի մեխանիզմներ, թե ինչպես պետք է համագործակցեն նախարարությունները այդ ոլորտությամբ: Դա շատ կարեւոր քայլ կդառնա: Մյուս կողմից կարեւոր է, թե ինչպես է գործելու տնտեսական ոլորտի նախարարություն-արտգործնախարարություն-դեսպանություն շղթան:**

**Իհարկե, լավ կլիներ, որ դրսում Հայաստանը ստեղծեր իր առեւտրական ներկայացուցչությունները, բայց քանի որ դրա հնարավորությունը չկա, պետք է գոնե ամեն մի դեսպանությունում լինի տնտեսական հարցերով կցորդ: Նա պետք է վերը նշված խորհրդի միջոցով հստակ իմանա, թե ինչով պետք է զբաղվի տվյալ երկրում: Պետք է ընտրվեն մեր զարգացման համար կարեւոր երկրներ, եւ արդյունաբերության զարգացման համար ֆունկցիոնալ երկրներ: Կցորդը պետք է ակտիվ դերում լինի, ինքը փնտրի վերը նշված ծրագրին համապատասխան առաջարկներ: Դրա հետ մեկտեղ ինչ են օգտագործվում նաեւ սփյուռքի հնարավորությունները: Մենք կարող ենք օգտագործել պատտոն ունեցող սփյուռքահայերի փորձը, որոնք հաստատական կարգով կարող են աշխատել դեսպանություններում եւ մեծ աջակցություն ցույց տալ: Այսօր նրանց աշխատանքը կարող է ավելի արդյունավետ լինել, քան դեսպանությունների կցորդների աշխատանքը: Եվ ով էլ ուզում է դրսից բողոքի, ես ամենայն պատասխանատվությամբ կարող եմ ասել, որ մեր հիմնական խնդիրը ներսում է: Մենք նախ մեր տունը պետք է կարգի բերենք: Շատ դեղեր են լինում, երբ չափազանց կարեւոր մարդիկ են այստեղ գալիս, հսկայական աշխատանք է կատարվում դեսպանություններում, բայց սխալ ընդունելության եւ նույնիսկ վերաբերմունքի պատճառով նրանք բողոքում հեռանում են: Նույնիսկ ներդրողի հետ վարվելակերպության կուլտուրա չունենք: Օդանավակայանի դժվարությունները հաղթահարելուց հետո նրանք ասում են, որ այլեւս այստեղի երկիր ոտք չեն դնի:**

**– Բայց օտարերկրյա ներդրողները բողոքում են նաեւ տնտեսական, հարկային այն անբարենպաստ վիճակից, որն այսօր օրենքով ամրացված է:**

– Երբ ասացի, որ մեր տունը պետք է կարգի բերենք, նկատի ունեի նաեւ դա:

Յուրաքանչյուր ներդրողի հետ, որն ի դեպ ինֆորմացիայի մեծ աղբյուր է, պետք է աշխատանք տարվի եւ պարզվի, թե նա ինչպիսի կարիք ունի մեր մասնային հարկային համակարգի վերաբերյալ: Համամիտ եմ, որ դա լուրջ փոփոխության կարիք ունի: Մենք պետք է ամեն օր վերլուծություն անենք եւ այնպիսի պայմաններ ստեղծենք, որ ներքին արտադրողը եւ օտարերկրյա ներդրողը կարողանան նորմալ աշխատել:

**– Շատ ներդրողներ գալով Հայաստան եւ տիվելով այսպես կոչված որոշ կլանային տնտեսական**

# Գառնիկ Նանագուլյան. «Նախ պետք է կարգի բերենք մեր տունը՝ կառավարությունը»

## Նախաձեռնությունների համագործակցության մեխանիզմները ճշտված չեն

ոլորտի ձեռնարկություններ ունենալ: Փորձը ցույց է տալիս, որ դրանք միայն վնասով են աշխատում, եւ դա այդպես էլ պետք է լիներ:

Իր ծավալով դա ընդհանուր առեւտրի մինչեւ 5 տոկոսն է կազմում: Իհարկե, մենք ինքնուրույնություն ենք տվել նրանց, բայց դա շաղկապված է տարբեր հրահանգներով: Մենք պետք է փորձեինք նաեւ սեփականաշնորհման մեջ նոր տարրեր ներմուծել, որը թույլ տար սեփականաշնորհումից հետո աշխատեցնել այդ ոլորտը: Երրորդ ուղղությունը զբոսաշրջիկությունն էր: Պետք է հաշվի առնել, որ տնտեսության այդ սեկտորը մեծ աղագա ունի Հայաստանում: Մենք դիմեցինք մի շարք միջազգային կազմակերպությունների, UNDP-ին, որպեսզի տեխնիկական օգնություն ցույց տան: Այժմ սերտորեն համագործակցում ենք միջազգային տուրիստական կազմակերպության հետ (WTO), եւ մոտ ապագայում սպասվում է նրանց առաջին առաքելության այցը Երեւան: Նպատակը Հայաստանի անդամակցությունն է այդ կազմակերպությանը, եւ հնարավոր է, որ դա լինի այս տարի: Մշակվում է եւ վերջնական փուլում է գտնվում ազգային տուրիզմի զարգացման ծրագիրը, ինչպես նաեւ տուրիզմի մասին ՀՀ օրենքը, մասնավոր տուրիստական գործակալությունների գործունեության կանոնակարգումն ու լիցենզավորումը: Փորձում ենք նաեւ երկխոսություն սկսել մասնավոր սեկտորի ներկայացուցիչների հետ եւ վերը նշված ծրագրերը կազմելիս հաշվի ենք առել նաեւ նրանց կարծիքը: Սակայն պետք է նշեմ, որ այսօր մեր մասնավոր սեկտորը բավականին թույլ է, եւ լուրջ օգնության կարիք ունի: Դրա հետ մեկտեղ մի շարք օտարերկրյա տուրիստական ընկերությունների հետ բանակցություններ ենք վարում, որպեսզի վերականգնենք Հայաստան եկող զբոսաշրջիկին: Ի վերջո, նա նույնը չէ, ինչ-որ Փարիզ կամ Լոնդոն գնացողը: Մենք մեր յուրահատկություններն ունենք, եւ լավը եւ բացասականը: Մենք չունենք այն ենթակառուցվածքը, որն ի վիճակի է ընդունելու գեղեցիկ ու հարմարավետ հյուրանոցներ փնտրող զբոսաշրջիկներին:

Աշխարհում կա նաեւ ինտելեկտուալ զբոսաշրջիկ, որը գնում է ուսումնասիրելու պատմությունը, նարտարապետությունը, բնությունը: Հետաքրքիր, մենք պետք է աշխատանք տանենք այդ ուղղությամբ: Անկախությունից հետո առաջին անգամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ UNDP-ի հետ համատեղ Հայաստանին նվիրված մի ալբոմ-գիրք ենք պատրաստում, որը երեւի թե սեպտեմբերին պատրաստ կլինի, եւ այլեւս վրան գրված չի լինի «Սովետական Հայաստան»:

Բացի այդ, Երեւանի երեք հյուրանոցները «Անին», «Դվինը» եւ «Արմենիան» ներկայացվում են միջազգային մրցույթի, որի մասին կհայտարարվի մոտ օրերս: Պայմանները բավականին խիստ են, քանի որ նպատակն է բարձրացնել այդ հյուրանոցների մակարդակը ստանալով նոր ներդրումներ:

Հյուրանոցները կվաճառվեն օտարերկրյա այն ընկերությանը, որն իր հետ կբերի արեւմտյան հյուրանոցների հաստատուն դեկավարում ունեցող մի ընկերության (օր. Հիլտոն եւ այլն): Պայմանները կտպագրվեն բերքերում:

**– Ձեր աշխատանքներում առաջնահերթությունները չափազանց շատ է, եւ աշխատանքի բաժանումն էլ անհիմն է: Ոչ մեկը երբեւիցե չի մտածել այն մասին, որ նույնիսկ այս գործող համակարգում մեխանիզմներ կան, որոնց օգնությամբ կարող է բյուրոկրատական շղթան շրջանցել: Իմ կարծիքով, դա կարելի է լուծել միայն մի ճանապարհով, եթե կարգի բերենք մեր տունը՝ կառավարությունը: Տնտեսական ոլորտի հարցերով զբաղվող բազմաթիվ նախարարությունների առկայությունը ավելորդ է: Այսօր գոյություն ունեն է-կոնոմիկայի, արդյունաբերության, առեւտրի, սեփականաշնորհման եւ օտարերկրյա ներդրումների նախարարություններ, այլ կառուցվածքներ: Այսինքն, հսկայական համակարգ է, որը զբաղվում է մի գործով, որպեսզի ներքին արտադրողը իր բողարկած ապրանքը կարողանա արտահանել: Դա հսկայական բյուրոկրատական համակարգ է, որը պետք է փոխվի:**

**Երկրորդ, արտգործնախարարությանը հետ համագործակցությունը կարեւորում եմ, եւ դա կարելի է անել մի քանի ձեւերով: Արտաքին տնտեսական հարցերի հիմնական ուղղվածությունը տալիս է ազգային անվտանգության խորհուրդը: Դրանից հետո պետք է զբաղվենք նոր շուկաների գրավմամբ եւ հների վերականգնմամբ: Դրա համար արտահանող ապրանքների տեսականին պետք է ավելացվի: Չէ՞ որ կորցրել ենք մեր շուկաները: Սակայն մեր ներքին պոտենցիալը բավարա՞ր է, որպեսզի միջազգային ստանդարտներին համապատասխանող արտադրանք տանք: Անձնական կարծիքս է՝ ոչ:**

**Այսօր եզակի երեւույթներ կան, որոնք կարող են շուկայի պայմաններում զարգանալ, արտադրանք տալ, բայց այդ արտադրանքը արտաքին շուկայում մրցակցություն չի կարող ունենալ: Դա նշանակում է, որ կառավարությունը բավականին ակտիվ դեր պետք է ունենա, որպեսզի օգնի մեր արտադրողին, իհարկե առանց խառնվելու շուկայի գործերին, կանխագուշակելով շուկայի մրցունակության արդյունքները:**

**Այսինքն, արտադրողին պետք է կողմնորոշել դեպի իրական շուկաներ եւ օգնել նոր տեխնոլոգիաների ներդրման հետ համագործակցությունը կարեւորում եմ, եւ դա կարելի է անել մի քանի ձեւերով: Արտաքին տնտեսական հարցերի հիմնական ուղղվածությունը տալիս է ազգային անվտանգության խորհուրդը: Դրանից հետո պետք է զբաղվենք նոր շուկաների գրավմամբ եւ հների վերականգնմամբ: Դրա համար արտահանող ապրանքների տեսականին պետք է ավելացվի: Չէ՞ որ կորցրել ենք մեր շուկաները: Սակայն մեր ներքին պոտենցիալը բավարա՞ր է, որպեսզի միջազգային ստանդարտներին համապատասխանող արտադրանք տանք: Անձնական կարծիքս է՝ ոչ:**

**Այսօր եզակի երեւույթներ կան, որոնք կարող են շուկայի պայմաններում զարգանալ, արտադրանք տալ, բայց այդ արտադրանքը արտաքին շուկայում մրցակցություն չի կարող ունենալ: Դա նշանակում է, որ կառավարությունը բավականին ակտիվ դեր պետք է ունենա, որպեսզի օգնի մեր արտադրողին, իհարկե առանց խառնվելու շուկայի գործերին, կանխագուշակելով շուկայի մրցունակության արդյունքները:**

**Այսինքն, արտադրողին պետք է կողմնորոշել դեպի իրական շուկաներ եւ օգնել նոր տեխնոլոգիաների**



**ներդրման հետ համագործակցությունը կարեւորում եմ, եւ դա կարելի է անել մի քանի ձեւերով: Արտաքին տնտեսական հարցերի հիմնական ուղղվածությունը տալիս է ազգային անվտանգության խորհուրդը: Դրանից հետո պետք է զբաղվենք նոր շուկաների գրավմամբ եւ հների վերականգնմամբ: Դրա համար արտահանող ապրանքների տեսականին պետք է ավելացվի: Չէ՞ որ կորցրել ենք մեր շուկաները: Սակայն մեր ներքին պոտենցիալը բավարա՞ր է, որպեսզի միջազգային ստանդարտներին համապատասխանող արտադրանք տանք: Անձնական կարծիքս է՝ ոչ:**

**Այսօր եզակի երեւույթներ կան, որոնք կարող են շուկայի պայմաններում զարգանալ, արտադրանք տալ, բայց այդ արտադրանքը արտաքին շուկայում մրցակցություն չի կարող ունենալ: Դա նշանակում է, որ կառավարությունը բավականին ակտիվ դեր պետք է ունենա, որպեսզի օգնի մեր արտադրողին, իհարկե առանց խառնվելու շուկայի գործերին, կանխագուշակելով շուկայի մրցունակության արդյունքները:**

**Այսինքն, արտադրողին պետք է կողմնորոշել դեպի իրական շուկաներ եւ օգնել նոր տեխնոլոգիաների**

ներդրման հետ համագործակցությունը կարեւորում եմ, եւ դա կարելի է անել մի քանի ձեւերով: Արտաքին տնտեսական հարցերի հիմնական ուղղվածությունը տալիս է ազգային անվտանգության խորհուրդը: Դրանից հետո պետք է զբաղվենք նոր շուկաների գրավմամբ եւ հների վերականգնմամբ: Դրա համար արտահանող ապրանքների տեսականին պետք է ավելացվի: Չէ՞ որ կորցրել ենք մեր շուկաները: Սակայն մեր ներքին պոտենցիալը բավարա՞ր է, որպեսզի միջազգային ստանդարտներին համապատասխանող արտադրանք տանք: Անձնական կարծիքս է՝ ոչ:

Այսօր եզակի երեւույթներ կան, որոնք կարող են շուկայի պայմաններում զարգանալ, արտադրանք տալ, բայց այդ արտադրանքը արտաքին շուկայում մրցակցություն չի կարող ունենալ: Դա նշանակում է, որ կառավարությունը բավականին ակտիվ դեր պետք է ունենա, որպեսզի օգնի մեր արտադրողին, իհարկե առանց խառնվելու շուկայի գործերին, կանխագուշակելով շուկայի մրցունակության արդյունքները:

Այսինքն, արտադրողին պետք է կողմնորոշել դեպի իրական շուկաներ եւ օգնել նոր տեխնոլոգիաների ներդրման հետ համագործակցությունը կարեւորում եմ, եւ դա կարելի է անել մի քանի ձեւերով: Արտաքին տնտեսական հարցերի հիմնական ուղղվածությունը տալիս է ազգային անվտանգության խորհուրդը: Դրանից հետո պետք է զբաղվենք նոր շուկաների գրավմամբ եւ հների վերականգնմամբ: Դրա համար արտահանող ապրանքների տեսականին պետք է ավելացվի: Չէ՞ որ կորցրել ենք մեր շուկաները: Սակայն մեր ներքին պոտենցիալը բավարա՞ր է, որպեսզի միջազգային ստանդարտներին համապատասխանող արտադրանք տանք: Անձնական կարծիքս է՝ ոչ:

Այսօր եզակի երեւույթներ կան, որոնք կարող են շուկայի պայմաններում զարգանալ, արտադրանք տալ, բայց այդ արտադրանքը արտաքին շուկայում մրցակցություն չի կարող ունենալ: Դա նշանակում է, որ կառավարությունը բավականին ակտիվ դեր պետք է ունենա, որպեսզի օգնի մեր արտադրողին, իհարկե առանց խառնվելու շուկայի գործերին, կանխագուշակելով շուկայի մրցունակության արդյունքները:

Այսինքն, արտադրողին պետք է կողմնորոշել դեպի իրական շուկաներ եւ օգնել նոր տեխնոլոգիաների

հարցում, իսկ դա նշանակում է նոր ներդրումներ բերել, որովհետեւ մեր ներքին ֆինանսական ոլորտը զարգացման համար բավարար չեն: Եվ ամենակարեւորը, կառավարման (մենեջմենթի) ոլորտն է, որը այսօր մեզանում, ցավոք սրտի, գոյություն չունի: Սակայն, նախարարությունների միջեւ համագործակցության արդյունավետությունը մեծանում է օտարերկրյա ներդրումներ բերելու մեջ: Դա կարելի է անել հետեւյալ ձեւով: Եթե օրինակ որեւէ տնտեսական նախարարության հովանու տակ ստեղծվի ներդրումների գրավման եւ արտահանման խրախուսման ազգային խորհուրդ, որի մեջ կներգրավեն արտգործնախարարի, ֆինանսների, արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության, կապի եւ այլ նախարարությունների փոխնախարարների եւ կմշակեն սկզբունքային այլ առաջնային ծրագիր, որոնք կառավարությունը ի վիճակի է իրականացնել: Եվ երկրորդը՝ կճշտվեն ֆունկցիոնալ ծրագրերը: Դա կդառնա այն համակարգող խորհուրդը, որն էլ կմշակի մեխանիզմներ, թե ինչպես պետք է համագործակցեն նախարարությունները այդ ոլորտությամբ: Դա շատ կարեւոր քայլ կդառնա: Մյուս կողմից կարեւոր է, թե ինչպես է գործելու տնտեսական ոլորտի նախարարություն-արտգործնախարարություն-դեսպանություն շղթան:

Իհարկե, լավ կլիներ, որ դրսում Հայաստանը ստեղծեր իր առեւտրական ներկայացուցչությունները, բայց քանի որ դրա հնարավորությունը չկա, պետք է գոնե ամեն մի դեսպանությունում լինի տնտեսական հարցերով կցորդ: Նա պետք է վերը նշված խորհրդի միջոցով հստակ իմանա, թե ինչով պետք է զբաղվի տվյալ երկրում: Պետք է ընտրվեն մեր զարգացման համար կարեւոր երկրներ, եւ արդյունաբերության զարգացման համար ֆունկցիոնալ երկրներ: Կցորդը պետք է ակտիվ դերում լինի, ինքը փնտրի վերը նշված ծրագրին համապատասխան առաջարկներ: Դրա հետ մեկտեղ ինչ են օգտագործվում նաեւ սփյուռքի հնարավորությունները: Մենք կարող ենք օգտագործել պատտոն ունեցող սփյուռքահայերի փորձը, որոնք հաստատական կարգով կարող են աշխատել դեսպանություններում եւ մեծ աջակցություն ցույց տալ: Այսօր նրանց աշխատանքը կարող է ավելի արդյունավետ լինել, քան դեսպանությունների կցորդների աշխատանքը: Եվ ով էլ ուզում է դրսից բողոքի, ես ամենայն պատասխանատվությամբ կարող եմ ասել, որ մեր հիմնական խնդիրը ներսում է: Մենք նախ մեր տունը պետք է կարգի բերենք: Շատ դեղեր են լինում, երբ չափազանց կարեւոր մարդիկ են այստեղ գալիս, հսկայական աշխատանք է կատարվում դեսպանություններում, բայց սխալ ընդունելության եւ նույնիսկ վերաբերմունքի պատճառով նրանք բողոքում հեռանում են: Նույնիսկ ներդրողի հետ վարվելակերպության կուլտուրա չունենք: Օդանավակայանի դժվարությունները հաղթահարելուց հետո նրանք ասում են, որ այլեւս այստեղի երկիր ոտք չեն դնի:

**– Բայց օտարերկրյա ներդրողները բողոքում են նաեւ տնտեսական, հարկային այն անբարենպաստ վիճակից, որն այսօր օրենքով ամրացված է:**

– Երբ ասացի, որ մեր տունը պետք է կարգի բերենք, նկատի ունեի նաեւ դա:

Յուրաքանչյուր ներդրողի հետ, որն ի դեպ ինֆորմացիայի մեծ աղբյուր է, պետք է աշխատանք տարվի եւ պարզվի, թե նա ինչպիսի կարիք ունի մեր մասնային հարկային համակարգի վերաբերյալ: Համամիտ եմ, որ դա լուրջ փոփոխության կարիք ունի: Մենք պետք է ամեն օր վերլուծություն անենք եւ այնպիսի պայմաններ ստեղծենք, որ ներքին արտադրողը եւ օտարերկրյա ներդրողը կարողանան նորմալ աշխատել:

**– Շատ ներդրողներ գալով Հայաստան եւ տիվելով այսպես կոչված որոշ կլանային տնտեսական**

Արտագրությունը վարեց
ԱՎԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԸ

ԱԶԳ

# Միջազգային

Սկիզբը էջ 1

1989 թ. նախագահ Ալի Աքբար Ռաֆսանջանիի առաջին կառավարության անդամ նշանակվեց կրկին որդես մշակույթի եւ իսլամական կողմնորոշման նախարար, սակայն 1992 թ. Իրանի 4-րդ խորհրդարանի ճնշման տակ, որտեղ բացարձակ մեծամասնություն էին կազմում դահիճանողականները, հարկադրված հրաժարական տվեց: Այնուհետեւ, առ այսօր զբաղեցնում էր ազգային գրադարանի տնօրենի եւ մշակույթի հարցերով նախագահի Ռաֆսանջանիի խորհրդականի դիրքերը: Նա տիրապետում է 3 օտար լեզվի՝ անգլերեն, գերմաներեն եւ արաբերեն: Ամուսնացած է, ունի 2 դուստր եւ մեկ որդի:

Մոհամեդ Խաթամիի ընտրվելու հարցում վճռական դեր ունեցավ Իրանի երիտասարդությունը, որը վերջին տարիներին կրավորական դիրք է գրավել քաղաքական խնդիրների նկատմամբ, սակայն այս ընտրություններին ցուցաբերեց բարձր ակտիվություն, ինչը հանգեցրեց Իրանի իսլամական վարչակարգում առկա չափավորական հոսանքը ներկայացնող Մոհամեդ Խաթամիի անսպասելի մեծ հաջողությանը, որը կողմնակից է երկրում քաղաքական դաշտի բացմանը, ասիմետրությունը լիարժեք իրագործմանը, օրենքների գերակայության կիրառման, կրոնական ազատությունների ընդլայնմանը: Փաստորեն, Իրանի 30 միլիոնանոց ընտրախավի 90 տոկոսը մասնակցեց ընտրություններին, որոնց 21 միլիոնը քվեարկեց հօգուտ վերոհիշյալ գաղափարների: Ընդհանուր առմամբ, ընտրախավի նման ակտիվությունը, բացառությամբ հեղափոխական առաջին ընտրությունների, աննախադեպ էր: Իրանի խորհրդարանի նախագահ, դահիճանողական Ալի Աքբար Նաթեղ Նուրին շահեց ձայների ընդամենը 25 տոկոսը այն դեպքում, երբ ի շահ վերջինիս դահիճանողականները գործի էին դրել իրենց տնօրինության տակ գտնվող հզորագույն քաղաքական եւ տնտեսական լծակները, գործնականում ստեղծելով ընտրաղայքարի մասնակցող թեկնածուների համար անհավասար դայմաններ: Բացի այդ, Նաթեղ Նուրին վայելում էր նաեւ իսլամական հեղափոխության առաջնորդ երկրի քաղաքական եւ հոգեւոր առաջին դեմքի այաթոլլահ Ալի Խամենեի անուղղակի հովանավորությունը: Ուստի, ստեղծված իրավիճակում կարելի է ասել, որ ընտրությունների արդյունքը հուժկու հարված էր դահիճանողական մտածողությանը հօգուտ չափավորական ուժերի: Ասել է, թե հօգուտ քաղաքական եւ հասարակական ազատությունների ընդլայնման, մանավանդ որ երկու հոսանքների ներկայացուցիչների տնտեսական ծրագրերը, որոնք իրականում երկրորդ ոլորտն են մղվել, առանձնապես չէին տարբերվում:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե նորընտիր նախագահին ինչքանով կհաջողվի կյանքի կոչել իր գաղափարները ու նախընտրական խոստումները, այդ հարկ է նշել, որ նա այդ նպատակին հասնելու ճանապարհին դեմ է հայթայթի բավականին լուրջ դժվարություններ: Խաթամին տնտեսական եւ քաղաքական հզոր լծակներ տնօրինող դահիճանողական ուժերի արգելակող գործունեություններին հակազդելու նպատակով թեեւ կարող է հենվել միայն հասարակական կարծիքի վրա, որի հովանավորությունը վայելում է: Հանգամանքը, որը չի կարելի թերագնահատել: Բացի այդ, Խաթամիի կառավարությունը գործելու է մի խորհրդարանի հետ, որտեղ շատ փոքր տարբերությամբ մեծամասնություն են կազմում դահիճանողականները: Ավելին, խորհրդարանում զգալի թիվ են կազմում դեռեւս հստակ կողմնորոշում չունեցող դատգամավորները եւ չի բացառվում, որ վերջիններս միանալով չափավորականներին, մեծամասնություն ապահովեն չափավորականների համար: Մինչդեռ, նախագահ Ռաֆսանջանին իր նախագահության առաջին ժամկետում գործ ուներ մի խորհրդարանի հետ, որտեղ մեծամասնություն էին կազմում ձախ ուժերը լուրջ խոչընդոտելով նրա տնտեսական եւ ինչ-որ չափով նաեւ հասարակական դրորտի ծրագրերի իրագործմանը: Իսկ երկրորդ ժամկետում դահիճանողականների տնօրինությամբ խորհրդարանի որի խափանիչ գործունեությունը գերազանցում է անգամ նախորդին: Իրանի նախագահական 7-րդ ընտրությունների արդյունքները հաղթահարելու գործում կարող են դեր խաղալ հանրաքվեի միջոցով ընդունված դիմոխություն է դահանջվում որ Խաթամիի կառավարությունը գործունեությունը կարող է ընդլայնվել: Սակայն ավելացրել է, որ այսուհանդերձ հօգուտ Խաթամիի քվեարկելը բնավ էլ չի նշանակում իսլամական դեմ քվեարկում: Ռաֆսանջանին հույս է հայտնել նաեւ, որ աղազա կառավարության կազմում տեղ կգտնեն նաեւ իգական սեռի ներկայացուցիչները: Իսկ նորընտիր նախագահ Մոհամեդ Խաթամին իր առաջին հեռուստանայլությամբ առկա քաղաքական բոլոր ուժերին համագործակցության հրավիրելով, շեշտել է, որ հարկ է մտածել միայն ազատ եւ զարգացած Իրանի մասին, որտեղ կիասատվեն օրենքի բացարձակ իշխանությունը, բարոյականությունը եւ սոցիալական արդարությունը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Մոհամեդ Խաթամին՝ Իրանի նախագահ

*Երիտասարդները փոփոխություն են պահանջում*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Գործնական ճանապարհորդությունների գրանտների (travel grant) շնորհման, որին կարող են մասնակցել հասարակական, ինչպես նաեւ կիրառական գիտություններով զբաղվող Հայաստանի դասախոսներ, գիտնականներ, մասնագետներ, հասարակական գործիչներ եւ ուսանողներ: Գործնական ճանապարհորդությունների դրական նպաստներ կշնորհվեն այն անհատներին, որոնք հրավիրված են արտերկրում կայանալիք կոնֆերանսի, գիտաժողովի, սեմինարի կամ նմանատիպ այլ իրադարձություններին ներկայացնելու զեկուցումներ: Այս մրցույթին կարող են նաեւ մասնակցել այն անձինք, որոնք ունեն կարճաժամկետ (ոչ ավելի, քան երեք ամիս) ուսման կամ վերապատրաստման ծրագրի հրավեր: Երրորդ մրցույթի դիմումներն ընդունվում են մինչեւ հունիսի 6-ը: Այն ընդգրկում է հուլիսի 11-ից մինչեւ հոկտեմբերի 31-ը կայանալիք հրավերները: Մանրամասն տեղեկությունների եւ դիմումների համար դիմել Բաց հասարակության ինստիտուտի տեղեկատվական կենտրոն՝ հեռեւյալ հասցեով.

*Երեւան, Սրամի (նախկին Սոլանոդարյան) փող. 44, Փիլիսոփայության եւ իրավունքի ինստիտուտ, հեռ. 530822, հեռ/ֆաքս. 151088.*


## ՀԱՅԻՆՏՈՒՐ

«Հայինտուր» պետական ձեռնարկությունը (նախկին «Ինտուրիստ») կազմակերպում է Ձեզ համար 14-օրյա հանգիստ **Անթալիայում՝ Միջերկրական ծովի** ափին:

Ուղիղ չարտերային չվերթ Երեւան-Անթալիա-Երեւան:

Առաջին չվերթը **հունիսի 8-ին,** հետագայում՝ **14 օրը** մեկ:

Առաջարկում ենք 3,4,5 աստղանի, ծովափին մոտ գտնվող հարմարավետ հյուրանոցներ՝ օրը երկու անգամ սնունդով:

Շանեկաղողները կարող են զբաղվելով **«Կախարդական կյանք»** հյուրանոցային համալիրում, որը Ձեզ սպասում է հոյակերտ հանգիստ: Ձեր տրամադրության տակ կլինեն ռեստորան, բարեր, բաղնիք, դիսկոթեքներ, [illegible] բադնիք, մարզական համալիրներ, լողավազաններ:

**Վճարելով ուղեգրի արժեքը,** դուք կստանաք վերը նշված ծառայություններից զատ եւ առանց սահմանափակումների ուտելիք եւ զանազան խմիչքներ՝ վիսկի, ջին, գինի, գարեջուր եւ այլն:

**Շտապեք ապահովել Ձեզ համար տեղեր, քանի որ դրանց քանակը սահմանափակ է:**

Սպասում ենք Ձեզ.

Մեր հասցեն՝ ք.Երեւան 375010
Փավստոս Բյուզանդի թիվ 1
հեռ. 56-40-62, 58-22-82, 58-11-23



## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տուն

Մայիսի 31-ին, ժամը 12.00-ին

Առնո Բաբաջանյանի անվան մրցույթի դափնեկիր

**ԿԱՄԻԼԱ ԵՐԿԱՆՅԱՆ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
(դաշնամուր)

Ծրագրում՝ Բախ, Բեթհովեն, Շոպեն



## ՀԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը եւ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրավիրում են Ձեզ մասնակցելու Եղիշե Չարենցի ծննդյան 100-ամյակին նվիրած հոբելյանական գիտական նստաշրջանին, որը տեղի կունենա 1997 թ. մայիսի 29-ին եւ 30-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում (Բաղրամյան 24):

*Նիստերի սկիզբը առավոտյան ժ. 11-ին:*


ՀԱՄԱՌՈՏ

## Բոսնիա. Փախստականներին կվերադարձնեն ՆԱՏՕ-ի զինվորները

23 ՄԱՅԻՍ, VOA: ԱՄՆ-ի պետքարտուղար Օլբրայթը հայտարարեց ամերիկյան դիվանագիտական նոր նախաձեռնության մասին, որն ուղղված է Բոսնիայում խաղաղ գործընթացի ամրապնդմանը: Ելույթ ունենալով երեկ ԱՄՆ-ի Կոնգրեսում, Օլբրայթը հայտնեց, որ նախագահ Քլինթոնը հավանություն է տվել Բոսնիայում բնակվող էթնիկական խմբերի վրա ճնշումն ուժեղացնող մի շարք միջոցառումներին՝ նպատակ ունենալով հասնել այն բանին, որ նրանք կատարեն դեյթոնյան համաձայնագրի կետերը: Մասնավորապես, կընդլայնվեն Բոսնիայում ՆԱՏՕ-ի զինծառայողների իրավասությունները, որպեսզի նրանք կարողանան աղահովել փախստականների անվտանգ վերադարձը հայրենիք:

## Ղրղզստանի 4 լրագրող դատապարտվեց՝ 4 հոդվածի համար

23 ՄԱՅԻՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Ղրղզստանի Բիշքեկ քաղաքի դատարանը այսօր «Ռեսպուբլիկա» շաբաթաթերթի 4 լրագրողների մեղավոր ճանաչեց գլխավոր խմբագիր Իգիթովան եւ լրագրող Զիկովը կազատազրկվեն 18 ամսով, իսկ 2 այլ խմբագիրներ Իսլաշեւան եւ Շամշիեւը 18 ամսով կզրկվեն լրագրողի աշխատանքով զբաղվելու իրավունքից: Նրանք դեռ է մուծեն նաեւ 115-ական դոլար տուգանք: Լրագրողների դեմ հայցով հանդես էր եկել Ղրղզստանի ոստան ընկերության նախագահ Սարգուլովը 93-96 թվականների ընթացքում «Ռեսպուբլիկա» շաբաթաթերթի էջերում իր դեմ տպագրված 4 հոդվածների համար:

## Ինքնասպանության ցուցանիշն աճում է

Ամեն տարի 15-24 տարեկան հազար երիտասարդներ վերջ են տալիս իրենց կյանքին եւ 40000-ն էլ ինքնասպան լինելու փորձ են անում: Սա մահացության երկրորդ դատճառն է այս տարիքի երիտասարդների շրջանում: Մահացածների ընդհանուր թվի երեք չորրորդը կազմում են տղաները, քանի որ նրանց ձեռնարկումներն ավելի ծայրահեղ են: Անհաջող մահափորձ կատարած երեք երիտասարդներից մեկը որոշ ժամանակ անց այն կրկնում է: Կրկնահանցագործության միջին ցուցանիշը (5 տոկոս) երիտասարդների շրջանում աճում է մինչեւ 37 տոկոս: Ի՞նչն է դատճառը: Գուցե այն, որ երիտասարդների օգնության կոչերը լուրջ չեն ընկալվում: Ընդ որում, աղջիկներն ավելի հիշ են ուշադրության արժանանում (18 տոկոս), քան թե տղաները (24 տոկոս): Հիմնականում (դեռեւերի 80 տոկոսը) երիտասարդներն այս կամ այն ձեւով զգուշացնում են, որ մտադիր են ինքնասպան լինել: Հակվածությունը ինքնասպանությանը չի բնորոշվում բնակավայրով՝ լինի քաղաք թե արվարձան: Գրանցված դեռեւերի թիվն անհուսորեն աճում է եւ ենթադրվում է, որ կատարված ինքնասպանությունների մեկ հինգերորդը այդպես էլ մնում է անհայտ:

«ԼՊԵԲԱԱՐՈՆ»

ԱԶԳ

# Մշակույթ

# «Վեց սիրահարված խենթ» կամ հոգեւոր աղեs

## Նոր ներկայացում Պարոնյան թատրոնում

Անկեղծ ասած, «Վեց սիրահարված խենթ» ներկայացումը դիտելուց հետո իմ առաջին ցանկությունն էր տեսնել Արթուր Կարապետյանին մեկ այլ դերակատարման մեջ: Նրա Հայկ կերպարի լավ կերտումն արդեն իսկ բեմից փոխանցված այն հրավիրատոմսն էր, որի կարոտը այդքան զգալի է հատկապես մեր օրերում: Ընկերներին եւ բարեկամներին, տներում եւ միջանցքներում հրավիրատոմս տալը, համաձայնենք, որ բեւեռապես այլ գործընթաց է եւ կարեւորը հանդիսատեսի անկեղծ շահագրգռվածությունն է: Կարծում ենք, Արթուր Կարապետյանը կարողացավ ստեղծել նման շահագրգռվածություն, ու եթե միայն նա կարող է նման հաջողությամբ հանդես գալ դերասանական այլ ամպլուաներում, ապա հավանաբար մենք դուռ ունենք սպասված դերասանի հետ: Նա Ստանիսլավսկու աշակերտն է այնպանով, որքանով դահլիճում նստած է Բրեխտը: Նա պասիվ կամ ընկճված չէ ներկայացման յուրաքանչյուր դրվագում, եւ հատկապես հետաքրքիր է նրան հետեւել այն պահերին, երբ դահլիճի ու հարթակի ուշադրության էպիկենտրոնը տեղայնացված է նրանից որոշ հեռավորության վրա: Իմպրովիզացիա հենց տեղում եւ ընդ որում առանց խաղի չարաշահման: Բացի այդ, խաղի գործընթացի նկատելի գերակայություն ակնկալվող արդյունքի նկատմամբ, այլ բառերով ասած, նվիրվածության ծիշտ կողմնորոշում: Հանդիսատեսի ակնթարթային ծափահարություններին ուղղված ձայնային կամ շարժուձեւային ցածրորակ էֆեկտների գրեթե իսպառ անտեսում: Կարծում ենք, սա նոր եւ վաղուց սպասված գործելակերպ է, քանզի համաձայնենք, որ մեր դերասանները բոլորական ակնկալիքով առաջնորդվող մարդիկ են:

Եթե չեմ սխալվում, Գեւորգ Սարգսյանի պիեսը, որը եւ նշված վոդեւիլի հիմքն է, վերնագրված է ինչ այլ կերպ եւ ընդհանուր առմամբ սիրո մասին է: 1991-ին ստեղծված այդ գործը կոչված է լրացնելու պիեսների այն շարքը, որը սովորաբար հաստեցագրվում է Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի ուղղությամբ եւ հենված է լինում հանդիսատեսի ոչ այնքան խորքային, որքան մակերեւութային զգացմունքների խաղի վրա: Անշուշտ, թատրոնի առումով այստեղ բացասական ոչինչ չկա, քանզի դա ժանրային առանձնահատկություն է եւ հանդիսատեսի անկեղծ ծիծաղը տվյալ դեպքում հաստատման գլխավոր գործոնն է: Այլ բան, որ վաղուց ժամանակն է գտնել նշված ժանրի սահմաններում նոր արտահայտչամիջոցներ ու մատուցման այլընտրանքային եղանակներ:

«Վեց սիրահարված խենթ» ներկայացումը դիտվում է որպես նման մի տարբերակ, եւ այդ հղացման հեղինակը բեմադրիչ Գոհարինե Տրդատյանն է: Շուրջ տասը տարի առաջ նա հեռացել է դերասանական գործից, որոնելով «իմ պիեսը եւ իմ ռեժիսորին»: Հավանաբար շուտով այդպիսի մի ընդմիջումից հետո նա կրկին կվայրէջքի դերասանական հարթակին եւ այս անգամ արդեն Ակադեմիական թատրոնում: Տասը տարիների ընթացքում Գոհարինե Տրդատյանը կարողացել է բեմադրել մի քանի գործ, որոնցից առաջինը 1987-88-ին Մարկեսի «Հրաշալի Ասպադեսիդան» էր: Այնուհետեւ 1995-96-ին բեմադրվում են «Հեքիաթ սիրո մասին» (Պանչեւ) եւ «Ծիծաղելի սեթեւեթումները» (Մոլիեր): Նշված գործերը ներկայացվել են Պատանի հանդիսատեսի եւ «Սուրդիա անիվների վրա» թատրոններում: Այնուամենայնիվ, Գոհարինե Տրդատյանի կարծիքով, «առանց հայ դրամատուրգիայի չի կարող գոյատեւել հայ թատրոնը», եւ այդ իսկ պատճառով ազատ բեմադրիչի կարգավիճակում հրավիրված լինելով երաժշտական կոմեդիայի թատրոն, նա սկսել է աշխատել հայ հեղինակի նոր գործի վրա:

Պարզ մի սյուժե. երկու բժիշկ-ընկեր՝ գիտական թեզերը պաշտպանած, միջ բարվոք, միջ կարիքավոր պատրաստվում են ամուսնությանը եւ այսօրյա քաղքենի ու հիվանդ երեւանի մատուցած բոլոր հոգեկան վայրիվերումներից հետո, վերջ ի վերջո ամուսնանում են: Ահա այսքանը...

Մինչդեռ, բեմադրիչի մոտեցումը միջ այլ է, եւ Գոհարինե Տրդատյանի համոզվածությամբ՝ «ներկայացումը ոչ թե սիրո մասին է, այլ մեր տղամարդկանց բարդույթների ու նախապաշարումների»: Ուստի եւ, հակառակ պիեսի, ներկայացումը չի ավարտվում սիրո հաղթանակով: Հաղթանակում է հիվանդությունը: Զույգերին այդպես էլ չի սպացվում գրանցել, եւ Մենդելսոնը վերջ ի վերջո ընորհավորում է լրիվ ուրիշ մարդկանց: Երկու գաղափար սպորագրվում են ամուսնության վկայականի տակ, եւ այդ գաղափարներն են քաղքենիությունը եւ ոսոիկանը: Համաձայնենք, որ մեր քաղաքի անբաժանելի եւ նույնիսկ բախտորոշ տարրերը: Ասում են՝ թե որքան դառն է ժամանակահատվածը մարդու համար, նույնքան քաղցր է գալիք պատմաբանի:

Անշուշտ ներկայացումը կատարյալ չէ եւ կարծում եմ, որ ի սկզբանե նման նպատակ չի էլ դրվել: Սա, ըստ էության, ինչպես նշեցինք, նոր ձեւերի որոնմանը ուղղված մի փորձնական աշխատանք է, որն ի դեպ այդ կարգավիճակում չափազանց հաջող է: Փորձի մեխը բեմադրիչի նոր մոտեցումն է, թատերային նկարչի (Գարեգին Եվանգուլյան) աշխատանքը, երաժշտական ձեւավորումը (Գոհարինե Տրդատյան, Էդուարդ Հարությունյան) եւ հատկապես Արթուր Կարապետյանի խաղը: Այսքանը՝ նորության կարգով: Իսկ ինչ վերաբերում է ներկայացման մեջ ընդգրկված մյուս դերասաններին (Խորեն-Բորիս Պետրոսյան, Արփի-Մարիամ Ղազարյան, Շամիրամ-Մելինե Համամջյան, Ոսիկան-Ռոբերտ Աղաջանյան եւ Գոռար-Սաթիկ Հարությունյան), ապա նրանց խաղում նկատելի էր ավանդական դարձած զգացմունքային գրոտեսկը, որն այդքան դուր է գալիս Պարոնյանի թատրոնի հանդիսատեսին: Մեկ-մեկ, երբ Բորիս Պետրոսյանը «մոռանում էր» բեմը, ծնվում էին շատ հետաքրքիր էջեր եւ, ընդհանուր առմամբ, թվում է, որ եթե մեր դերասանների նվիրվածությունը հասնի հենց այդ մոռացության աստիճանի, ապա շատ բան կտեղաշարժվի: Սակայն մենք արդեն մոտենում ենք մեկ այլ, շատ արդի հարցի, որով եւ հաճախ պայմանավորված է նշված նվիրվածության չափը: Մեր թատրոնների եւ թատերական գործիչների նյութական անապահովվածությունը մեր թատրոնի կործանման երաշխիքն է: Խոսվել է բազմիցս, եւ Գոհարինե Տրդատյանը իր հերթին ավելորդ չհամարեց նշել, թե «յուրաքանչյուր պետական թատրոն անհրաժեշտ է, որ ունենա մեկ-երկու հովանավոր, եւ այստեղ պետք է պետական մոտեցում»: Ամիսներով անաշխատավարձ մնալ կարող է միայն Դիոգենեսը իր տակառում, եւ եթե չլիներ Երվանդ Ղազանչյանի օգնությունը, ապա սկզբունքային առումով կարեւոր այս ներկայացումը՝ Գոհարինե Տրդատյանի խոստովանությամբ, չէր կարող կայանալ:

ԱՐԻՍ ՂԱՋԻԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆ

# Ավանդույթ դեռ չկա, սակայն պահանջ զգացվում է

## Լուսանկարչական ցուցահանդեսը կգործի մինչեւ մայիսի 30-ը

Մինչեւ մայիսի 30-ը Երեւանի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում կգործի լուսանկարչական մի ցուցահանդես, որը վերջին տարիներին շրջել է Ամերիկայի Միացյալ Նահանգներով, արթնացնելով շարքային ամերիկացու հետաքրքրությունը Հայաստանի հանդեպ: Լուսանկարներում արտացոլված է մեր երկրի բախտորոշ մի ժամանակահատված (1988-1993), ընդ որում ներկայացված է սովորական հայաստանյան կենցաղը, որ ընդգրկված են եւ Սպիտակի երկրաշարժը եւ ազատագրական պայքարը եւ դաժան ձմեռները: Նկատենք, որ Հայաստանում դեռ ձեւավորված չէ լուսանկարչական ցուցահանդեսի ավանդույթ, եւ նշված միջոցառումը առաջին քայլերից է: Ինչ խոսք, տվյալ պրոտում արժանի են հիշատակման Հայաստանի պատմության թանգարանում պարբերաբար կազմակերպվող վավերագիր փաստաթղթերի ցուցադրումները, որտեղ զգալի դեր է հատկացվում պատմական լուսանկարներին: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այդ լուսանկարները հայաստանցի մարդուն զրավում են ոչ այնքան վիզուալ առումով, այլ որպես չսպառված ժամանակահատվածի կենդանի նկարագիր: Անցյալ տարի լուսանկարների ցուցահանդես է կազմակերպել Մաֆս Սիվասյանը եւ դա, կարծում եմ, առաջին ծիծեռնակն էր:



Մայիսի 23-ին Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում բացված «Դիմանկարներ վերադրումի» ցուցահանդեսի կազմակերպիչն է Հայաստանի այլընտրական կրթության եւ արվեստի կենտրոնը: Սա Չարլի Խաչատրյանի եւ Մարինե Խաչատուրի նախաձեռնած առաջին միջոցառումը չէ: Անցյալ ամիս ապրիլի 25-ին, նույն թանգարանում կազմակերպել էին «Տարորոշ սահմաններ» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին յոթ կին հեղինակների գործերը: Մայիսի 23-ին այս վերջին միջոցառման բացման օրը սրահում մարդաշատ էր եւ այցելուների հիմնական տոկոսը կազմում էին արտասահմանցիները: Ցուցահանդեսի նախագծի հեղինակը Դոնալդ Միլլերը, որը նույնպես սրահում էր, կարող էր իրավացիորեն կոչվել հայ ժողովրդի բարեկամ: 1990-ականների սկզբին նա ԱՄՆ-ում տպագրում է իր աշխատությունը նվիրված 1915-ի հայոց եղեռնին: Այնուհետեւ, որոշում է ստեղծել վավերագրական մի ժողովածու կարված ուղիներ նորագույն Խորհրդային հետ: այն է 1988-1993 թվականներ Հայաստան է գործուղվում ամերիկացի սոցիոլոգ-ասպիրանտների մի խումբ, որոնք հարցումներ են կատարում բնակչության չորս տարբեր բնակեւրաբանական խավերում (երկրաշարժից տուժածներ, Սումգայիթից բռնագաղթածներ, Ղարաբաղ, 1992-94 երեւանյան դաժան ձմեռ) հավաքելով վավերագրական մեծ նյութ: Այնուհետեւ Հայաստան է ժամանում հայտնի լուսանկարիչ Ջերի Բերնը, որը ,եւ ժառանգներին է հանձնում վերոհիշյալ հարցվողների կենցաղը: Շուտով նախատեսվում է վավերագիր այդ աշխատության լույսընծայումը, իսկ ցուցահանդեսում ներկայացված աշխատանքները կատարված լուսանկարների միայն մի մասն են:

Ա. Ղ.

# Ռազմիկ Դավոյանի «Ռեքվիեմ» պոեմի շնորհանդեսը

Քառասուն տարի առաջ լույս տեսավ Դավոյանի առաջին բանաստեղծությունը, 34 տարի առաջ առաջին գիրքը, իսկ շուրջ երեք տասնամյակ առաջ «Ռեքվիեմ» պոեմի առաջին մասը: Այն տեղ գտավ նաեւ հեղինակի հետագա ժողովածուներում, բարգմանվեց չեխերեն, գնահատվեց արժանվույն եւ ունեցավ լայն ճանաչում:

Երեւանի համալսարանի հրատարակչությունն օրերս լույս ընծայեց պոեմի առաջին եւ երկրորդ մասերը միասին: «Ռեքվիեմ» մարդկային հիվանդություններն ախտորոշելու եւ ծիշտ բուժում ձեռնարկելու համար գրում է հեղինակը: Երեւի դա է այս ստեղծագործության առաջին մասի ավարտից երեսուն տարի հետո էլ շարունակվելու պատճառը:

մասին է «Ռեքվիեմը»: Այստեղ սկսեց գրքի շնորհանդեսին նվիրված իր խոսքը գրականագետ Լեւոն Մկրտչյանը: Այդ ցավը խորապես զգացող բանաստեղծը այն դարմանելու ելք է որոնում:

Ռ. Դավոյանին ողջույնի ու ողջերի արտաքուստ խոսք ասացին արտիստ Սոս Սարգսյանը, գրականագետ Ֆելիքս Մելոյանը, նկարիչ Սարգիս Մուրադյանը:

Ելույթներն ընդմիջվում էին պոեմի հատվածների ընթերցումներով եւ երաժշտական համարներով:

«Շնորհակալ եմ ընթերցողից, ասաց Դավոյանը, որ իմ խոսքը չի կտրվել նրանից եւ այս շնորհանդեսի միջոցով այն կհասնի շատերին»:

Իր մոր հիշատակին նվիրված գրքի խմբագիրն է ողջին Մեր Դավոյանը:

ԹՈՒՐՔ ՄԱՍՈՒԼ

# «Օրինակ վերցրեք հայազգի Հակոբյանից»

«Հյուրրիյեթ» օրաթերթն իր մայիսի 11-ի համարում Պոլիսի թաղամասերին ուղղված այնպիսակում խորհուրդ է տալիս՝ օրինակ վերցնել հայերից: Այս մասին է գրում «Յառաջ» օրաթերթը՝ ավելացնելով՝ «Պարոն Թայլիի գնացեք դաս առեք հայերից»: Խորագրով հոդվածում թերթն անդրադառնում է դասական բուրք երաժշտության ատպարեզում վերջերս պատրաստված երկու ձայնագրություններին, «որոնցից առաջինը Պոլիսի թաղամասերի թողարկած Դեղեր է: Ֆենդիի երաժշտության երեք CD-ներն են, իսկ երկրորդը ամերիկահայ Հարոյի Հակոբյանի հրապարակ հանած Թամբուրի ճենիլ բեյի հնաչիզ երգերի վերաձայնագրությունը: Հոդվածագիրը տեղեկացնում է լրատվությանը, ծանր ճնաղաստության է ենթարկում առաջինին, որ արդյունք է խնամիական կարգադրությունների եւ դվանանի խոսքեր հղում երկրորդին՝ որի արդյունքն է արվեստի հանդեղ նախաձեռնողի տաճած սիրո եւ որը պատրաստված է տեխնիկայի ամենավերջին նորույթների համաձայն: Վերջում մշակույթի բաժնի պատասխանատուներին ուղղված հետեւյալ խոսքերով է նա ավարտում հոդվածը՝ «Օրինակ վերցրեք Հակոբյանից եւ մյուս ձայնագրություններից՝ շնորհ արեք ու երաժշտությամբ-մի զբաղվեք՝ որովհետեւ բանիցս ապացուցել եք՝ որ այդ գործից ոչինչ չեք հասկանում»:

ՖՈՒՏԲՈԼ

# «Յուվենտուսը»՝ թափառող կրկես

## Իտալիայի չեմպիոնը հեղափոխություն է անում ֆուտբոլում

***Տուրինի «Յուվենտուսի» ֆուտբոլիստները, ոչ-ոքի (1-1) խաղալով «Ասալանտա» ակումբի հետ, դարձան Իտալիայի չեմպիոն: Հավանաբար հաջորդ մրցաշրջանում Տուրինի ֆուտբոլասերները կզրկվեն հնարավորությունից տեսնելու իրենց հարազատ ակումբի խաղերը սեփական մարզադաշտում: Ինչո՞ւ: Այս մասին պատմում է «Ազատություն» ռադիոկայանի թղթակիցը Իտալիայում***

Այնուամենայնիվ, տարօրինակ ճակատագիր ունեն Տուրինի մարզադաշտերը: Իրադարձությունների անհասկանալի ընթացքով (թեեւ, Տուրինի համար, որը սեւ մոգության եվրոպական կենտրոններից մեկն է, սա միգուցե նորմալ է) նրանք բոլորն էլ վաղ թե ուշ դատապարտված էին փակվելու: Սկզբից դա տեղի ունեցավ լեգենդար «Տորինոյի» կենտրոնական «Ֆիլադելֆիա» մարզադաշտի հետ, որն այժմ ծածկվում է ժամանակի փոշով: Այնուհետեւ նման ճակատագրի արժանացավ «Կոմմունալե» մարզադաշտը, որ «Յուվենտուսը» շահել է Իտալիայի 17 առաջնություններ: Այժմ հերթը հասավ նաեւ «Դելլե Ալպի» մարզադաշտին, որը համեմատաբար «երիտասարդ» է, կառուցվել է 1990 թվի աշխարհի առաջնության նախօրյակին:

Տուրինի թիմերն այլեւս չեն ցանկանում խաղալ այս մրցաթեմում: Ժամանակակից շինարարության «աղամանը» արեւի տակ փայլող մարզադաշտը, որը նման է Ալպերի ստորոտում վայրէջք կատարած թռչող ափսեի, բավականին բանկ «հանում է», ոչ միայն Բ խումբ տեղափոխված «Տորինոյի», այլեւ ծաղկող «Յուվենտուսի» համար:

Տուրինի ակումբների (առաջին հերթին «Յուվենտուսի») եւ հաղթական իշխանությունների, որոնց է դատապարտվում մարզադաշտը, տարաձայնություններ ծագեցին դեռ 3 տարի առաջ: Այն ժամանակ «Տորինոն» եւ «Յուվենտուսը» առաջին անգամ փորձեցին զգալիորեն նվազեցնել մարզադաշտի վարձակալության հաղթահարեսարանին վճարվող գումարը, որը յուրաքանչյուր թիմի համար տարեկան մոտ 8 մլն դոլար էր կազմում: Գինը բավականին բարձր էր, հաստատես, եթե հաշվի առնենք-այն փաստը, որ թիմերը բաժին չէին ստանում այն գումարներից, որ մարզադաշտը ստանում էր գովազդից:

1995 թ. «Յուվենտուսի» եւ տեղի հաղթահարեսարանի հարաբերություններում ճեղք առաջացավ: Թիմը ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ եւ եզրափակիչ հանդիպումներն անցկացրեց Միլանում: Երկու տարի շարունակվեցին բանակցությունները «Յուվենտուսին» սեփական մարզադաշտ կառուցելու համար հողակտոր հատկացնելու կամ ակումբի լրիվ տնօրինությանը հին մարզադաշտը («Ստադիո Կոմմունալե») հանձնելու շուրջ: Այժմ, երբ երկու առաջարկներին էլ բացասական պատասխան տվեց, «Յուվենտուսը» որոշեց հաջորդ մրցաշրջանում այլեւս չխաղալ Տուրինում:

Իտալիայի առաջնության հանդիպումների մեծամասնությունը ակումբը պատրաստվում է անցկացնել Ռեջո-Նել-Էմիլիա քաղաքի մարզադաշտում: Առաջնության կարեւորագույն մրցամարտերը «Միլանի», «Ինտերի» եւ «Պարմայի» հետ կտեսնեն Բոլոնիայի եւ Վերոնայի մարզասերները: Իսկ եվրագավաթների խաղերը կանցկացվեն Տրիեստեյում եւ Պալերմոյում:

Այս տարբերակը, նույնիսկ ճանապարհորդությունների հետ կապված հսկայական ծախսերի դեպքում, թույլ կտա «Յուվենտուսին» զգալի գումարներ տնտեսել, քանի որ մյուս մարզադաշտերի վարձակալության գումարը բավականին ցածր է: Բացի այդ, շատ մարզադաշտեր, միայն «Յուվենտուսին» ընդունելու համար պատրաստ են խաղադաշտերը նույնիսկ անվճար տրամադրել:

«Յուվենտուսի» որոշումը, ըստ իտալական մամուլի, իսկական հեղափոխություն կլինի, որը լրջորեն կփոխի գործերի դրությունը իտալական ֆուտբոլում: «Այժմ «Յուվենտուսի» խաղերը կհավաքվեն Լուչիանո Պավարոտտիի կամ Փոլ Մակքարտնիի հյուրախաղերին», գրում է «Ռեսպուբլիկա» թերթը: «Յուվենտուսը» կվերածվի յուրօրինակ թափառող կրկեսի, որը տարվա մեջ 10 ամիս կշրջի Իտալիայում»:

Բավականին կփոխվեն նաեւ ֆուտբոլի տնտեսական գործոնները: «Յուվենտուսը» կդառնա ամենահաս յուրաքանչյուր տարածաշրջանում կունենա ֆուտբոլային շուկայի իր որմնախորշը, նոր հովանավորներ, նոր մարզասերներ, հեռեւաոյնս եւ նոր եկամուտներ:

Իհարկե, Տուրինից մեկնումը միանշանակ չընդունվեց ֆուտբոլիստների շրջանում, բայց ակումբի մարզիչ Մարչելլո Լիոջիին ոչնդում է, որ թիմը պայքարում է հանուն արդարության եւ, ուրեմն, պետք է պատրաստ լինի այդ պայքարի տհաճ հետեւանքներին: Տուրինի հաղթահարեսարանի եւ թիմի վեճին խառնվեց նույնիսկ Իտալիայի կառավարությունը, որը պարտադրեց հաղթի ոստիկանապետին դառնալ միջնորդ: Այժմ ոստիկանապետը փորձում է վեճի կարգավորման նոր տարբերակ գտնել, որն առայժմ չի հաջողվում:

Պատրաստեց
ՀՐԱՉՅ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԸ



## Հույն մարզուհիները անակնկալ են մատուցում

Հունաստանի Պատրաս քաղաքում շարունակվում է գեղարվեստական մարմնամարզության Եվրոպայի առաջնությունը: Երկու ծրագրերի կատարումից հետո թիմային դասակարգում առաջատար Ռուսաստանի հավաքականն է: Ռուսաստանցի մարզուհիները բոլորից հաջող հանդես եկան 3 գնդակներով եւ 2 ժապավեններով վարժություններում: Առայժմ երկրորդ տեղում է ընթանում Հունաստանի հավաքականը, ինչը խոշոր անակնկալ է: Երրորդ տեղում են ուկրաինուհիները: Անհատական վարժություններում հաղթեց ուկրաինացի մարզուհի Ելենա Վեսրիչենկոն: Լախտերով վարժություններում լավագույնն էր ռուսաստանցի Նատալյա Լիոկովսկայան: Իսկ ժապավենով լավագույն ծրագիրը ցույց տվեց ռուս մեկ այլ մարզուհի Յանա Բաշիրինան:

## Կատուն՝ առաջատարի արգելք

«Ջիրո դ'Իտալիա» հեծանվավազքում պայքարից դուրս մնաց առաջատարներից մեկը՝ իտալացի Մարկո Պանտանին: Նա բավական լուրջ վնասվածքներ ստացավ այն բանից հետո, երբ հեծանիվի տակ ընկավ մրցուղիում անսպասելի հայտնված կատուն: Ճիշտ է, լրատվական գործակալությունները չեն հայտնում կատվի մորթու գույնը, սակայն նշում են, որ 9-րդ փուլը շահեց Դմիտրի Կոնիշեւը՝ Ռուսաստանից: Իսկ առաջատարը Պավել Տոնկովն է, որը հետապնդողներին գերազանցում է 41 վրկ-ով:

ԲՈՔՇԱՄԱՐՏ

## Կարեն Մնացականյանը՝ Եվրոպայի չեմպիոն

Ֆինլանդիայի Կոյվոլա քաղաքում հունգ-հոմոսեքսական ըմբշամարտի եվրոպայի չեմպիոն, մինչեւ 58 կգ քաշային կարգում, դարձավ երեւանցի բանակային Կարեն Մնացականյանը, հայտնում են սպորտվարչության լրատվական ծառայությունից: Նշենք, որ Կարենը նաեւ եվրոպայի պատանիների չեմպիոն է, միջազգային կարգի սպորտի վարպետ:

ՇԱԽՄԱՏ

## Հակոբյանի երկու անընդմեջ հաղթանակները

Հայաստանի չեմպիոն Վլադիմիր Հակոբյանը հրաշալի է խաղում Մադրիդում շարունակվող միջազգային գրոսմայստերական մրցաշարում: Երրորդ եւ չորրորդ տուրերում հայ շախմատիստը մեկը մյուսի ետեւից պարտության մատնեց հոլանդացի Ջերոեն Պիկեսին եւ Վալերի Սալովին (Ռուսաստան): Այս հաղթանակներից հետո Հակոբյանը 3 միավորով միանձնյա գլխաղեցնում է երկրորդ տեղը: Երեւանցուց կես միավոր ավելի ունի Վեսելին Թոփալովը (Բուլղարիա), որը նույնպես երկու հաղթանակ տարավ՝ նախ մինչ այդ աղյուսակը գլխավորող Ալեխեյ Շիրովի (Իսպանիա), իսկ ապա հունգարուհի Յուդիթ Պոլգարի նկատմամբ:

Չորս տուրից հետո մրցաշարային իրավիճակն այսպիսին է.

| | | |
|---|---|---|
| 1. | Թոփալով (Բուլղարիա) | 3,5 |
| 2. | Հակոբյան (Հայաստան) | 3 |
| 3-4. | Բելյավսկի (Սլովենիա) | 2,5 |
| | Շիրով (Իսպանիա) | 2.5 |
| 5-7. | Սալով (Ռուսաստան) | 2 |
| | Պոլգար (Հունգարիա) | 2 |
| | Իլեսկաս (Իսպանիա) | 2 |
| 8. | Շորթ (Անգլիա) | 1,5 |
| 9. | Պիկես (Հոլանդիա) | 1 |
| 10. | Սան Սեգունդո | 0 |

Հինգերորդ տուրում Հակոբյանը սեւերով խաղում է Շորթի հետ: Թոփալովը, նույնպես սեւերով, հանդիպում է հետնապահի՝ Սան Սեգունդոյի հետ:

Գ. Հ.

ԹԵՆԻՍ

## Համաշխարհային ռեկորդը չփրկեց

Երեկ Փարիզում մեկնարկեց թենիսի Ֆրանսիայի բաց առաջնությունը: Մրցաշարի նախորդ տարվա հաղթող եվգենի Կաֆելնիկովը առաջին խաղում կհանդիպի չեխ թենիսիստ Մարտին Դանին, որը համաշխարհային ասիճանակարգում զբաղեցնում է 49-րդ տեղը: Կաֆելնիկովի կարծիքով, միայն հրաշք իրեն կօգնի կրկնելու անցյալ տարվա հաջողությունը: Հիշեցնենք, որ ռուս թենիսիստը 3 ամիս բուժում էր ձեռքի վնասվածքը եւ այժմ լավ մարզավիճակում չի գտնվում:

Ավստրալացի թենիսիստ Մարկ Ֆիլիպոուսիսը համաշխարհային ռեկորդ սահմանեց: Աշխարհի գավաթի խաղարկության եզրափակիչում (Դյուսելդորֆում) Իսպանիայի թիմի հետ մրցամարտում նա գնդակը խաղի մեջ մտցրեց 229 կմ/ժ արագությամբ: Ավստրալացու նվաճումը սակայն չազդեց մրցակիցների վրա: Նա զիջեց Ալբերտո Կոստային եւ իսպանացիները հաղթեցին 3-0 հաշվով:

ՁԱՆՐԱՄԱՐՏ

## Ամենաուժեղների Եվրոպայի առաջնությունում

**Խորվաթիայի Ռիեկա քաղաքում՝ ծանրամարտի եվրոպայի առաջնությունում ռուսաստանցի Դմիտրի Սմիռնովը արծաթե մեդալ նվաճեց մինչեւ 99 կգ քաշային կարգում: Երկամարտի գումարով ռուս ծանրորդին գերազանցեց ուկրաինացի Ստանիսլավ Ռիբալչենկոն, որի արդյունքն է 390 կգ, ինչ 5 կգ-ով շատ է Սմիռնովի արդյունքից:**

**Մինչեւ 91 կգ քաշային կարգում ուժեղագույնն էր թուրք Սունայ Բուլութը, որի արդյունքն էր 387,5 կգ:**

**Հունգարացի ծանրորդ Տիբոր Ստարկը չեմպիոն դարձավ մինչեւ 108 կգ քաշային կարգում: Երկամարտում նրա արդյունքն էր 412,5 կգ: Արծաթե պարգեւին արժանացավ Ռայմոնդս Բերկմանիսը Լատվիայից:**

ԼՈՒՐԵՐ

## Վիլնյովն առաջ է անցնում

Կանադացի ավտոտրավորդ Ժակ Վիլնյովը հաղթեց «Ֆորմուլա-1»-ի հերթական փուլում, որն անցավ Բարսելոնում:

Երկրորդ եւ երրորդ տեղերը գրավեցին ֆրանսիացիներ Օլիվիե Պանիսը եւ Ժան Ալեզին: Գերմանացի Միխայիլ Շումախերը գրավեց 4-րդ տեղը եւ Վիլնյովին զիջեց առաջատարությունը ընդհանուր հաշվարկում:



Ժակ Վիլնյով

## Գերմանիայում՝ համաշխարհային 2 ռեկորդ

Մյունխենում անցկացվեց գնդակային հրաձգության աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլը, որը նշանավորվեց համաշխարհային ռեկորդներով: Օդանոցի հրացանից հրաձգությունում նորվեգացի Լեյֆ Տենոր Ռոնալդը, ռուսաստանցի Արտյոմ Խաջիբեկովի հետ սուր մրցակցությունում, վաստակեց 700,2 միավոր, իսկ բելառուս հրաձիգ Սերգեյ Մարտինովը կրկնեց համաշխարհային բացարձակ նվաճումը փոքր տրամաչափի հրացանից պառկած հրաձգությունում (600 միավոր):

## Չին բադմինտոնիստները հաղթեցին աշխարհի առաջնությունում

Շոտլանդիայի Գլազգո քաղաքում շարունակվում է բադմինտոնի աշխարհի առաջնությունը: Թիմային դասակարգում հաղթեց Չինաստանի հավաքականը, որը եզրափակիչում 5-0 հաշվով հաղթեց Հարավային Կորեայի թիմին: Հայաստանի մարզիկների ելույթների մասին նոր տեղեկություններ առայժմ չկան: Ռուսաստանի հավաքականը խմբային մրցաշարի վերջին խաղում պարտության մատնեց ճապոնացիներին, բայց գրավեց 5-րդ տեղը: Թիմային մրցումից հետո սկսվեց բադմինտոնիստների անհատական առաջնությունը:

# «ԱՐՄԷՔՍՊՈ»

**Ցուցահանդեսների եւ տնայավաճառների պետական կենտրոնը**

**հունիսի 6–13-ը հրավիրում է Ձեզ այցելել «Կահույքի սրահ-97» ցուցահանդես-տնայավաճառը**

Ձեզ տրվում է եզակի հնարավորություն ծանոթանալու Հայաստանի պետական եւ մասնավոր արտադրական ձեռնարկությունների, կոմերցիոն ընկերությունների, Իտալիայի, Ռումինիայի, Իրանի, Թուրքիայի ներկայացրած արտադրանքի հետ:

Ցուցահանդեսը գործելու է ժամը 11.00–17.00:

Մուտքն ազատ է:

Մեր հասցեն՝ Երեւան, Շիրակի 43, «Արմէքսպո» ՑՏՊ կենտրոն, (նախկին ԺՏՆՑ)
Հեռախոս՝ 56-54-72, 46-24-19

КАХУЙСКИЙ СРАХ МЕБЕЛЬНЫЙ САЛОН FURNITURE SALON 97

# ԿԵՐԱՄԻԿԱ

մասնագիտացված խանութ-սրահը

**առաջարկում է**

**իտալական, իսպանական, թուրքական հատակի, պատերի եւ արտաքին երեսպատման կերամիկական սալիկների լավագույն տեսակներ:**

**Լավագույն որակ, մատչելի գներ, մասնագիտական սպասարկում, անվճար տեղափոխում:**

*Հասցեն՝ Չարենցի 7. հեռ. 58-63-58, ֆաքս 55-74-34*

# «ԱՅԱՔՍ»

**ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՁԵԶ**

Հունիսի 15–22-ը այցելել

## ԻՏԱԼԻԱ (ՌԻՄԻՆԻ)

- Տեղավորումը 4-աստղանի հյուրանոցում
- Սնունդը՝ օրը 2 անգամ
- Էքսկուրսիոն ծրագիր՝ Վենետիկ, Հռոմ, Սան-Մարինո
- Փաստաթղթերի ընդունումը՝ մինչեւ հունիսի 10-ը
- 30 կգ-ից ավել ուղեբեռ տեղափոխելիս 1 կգ-ի արժեքը՝ 3 դոլարին համարժեք դրամ

Կազմակերպում ենք նաեւ ճանապարհորդություններ **ԿԻՊՐՈՍ, ԵԳԻՊՏՈՍ, ԲՐԱԶԻԼԻԱ, ՄԱԼԴԻՎՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, ԲՈՒԼՂԱՐԻԱ, ՀՈՒՆԱՍՏԱՆ, ՖՐԱՆՍԻԱ, ԹԱՅԼԱՆԴ:**

*ԴԻՄԵՔ ՄԵԶ ԵՎ ՁԵՐ ԵՐԱԶԱՆՔԸ ԿԻՐԱԿԱՆԱՑՆԵՆՔ:*

ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 43/ա ՀԵՌ. 538845, 531573

**ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

3 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 5-րդ հարկում, 70/50 քմ, ավտոնկակով: Հրաչյա Քոչար 23 (նախկին Չեկի խանութի մոտ):
*Հեռախոս՝ 22-42-68*

**ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

*2 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 1-ին հարկում. Դեմիրճյան 17 շենք:*
*Հեռ.՝ 523056*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայրենական եւ արտասահմանյան կենցաղային էլեկտրական սարքավորումների նորոգում
Գյուլբենկյան (Կուտուզովի) 41
*Հեռ.՝ 22-22-37*

**ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է**

«Սամսոն Գեւորգյան» ան հատական ձեռնարկությունը (գրանցման N 264.020.02464 վկայականի N 01 Ա 023792: Տրված է Արաբկիրի պետռեգիստրի կողմից):

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Կխնամեմ երեխա 10 ամսականից բարձր տարիքի:
*Հեռ. 24-88-56, 22-69-30*

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

երկհարկանի տուն առանց ներքին հարդարանքի Նոր Արեւ 31 փողոցում:
*Հեռ. 45-59-99, 58-18-41*

Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժինը

*հրավիրում է*

«Արեւմտյան կառավարման ներածություն»

*թեմայով դասընթացին*

Դասընթացի օրերին կքննարկվեն մի քանի ելակետային գործոններ, որոնք ներկա փոփոխվող միջավայրում կարող են անհատներին օգնել կառավարելու աշխատավայրում: Դա հիմք կծառայի նրանց համար, ովքեր ցանկանում են զարգացնել կառավարման իրենց ունակությունները, քանի որ ուշադրության կենտրոնում լինելու են մասնավոր եւ հանրային հատվածների տնօրենները, ծրագրի ղեկավարները, կառավարիչները եւ դասատուները հաճախակի հանդիպող ամենօրյա գործնական խնդիրները: Դասընթացը մասնավորապես կընդգրկի հետեւյալ թեմաները

- Արեւմտյան կառավարման բնույթը եւ ամերիկյան կառավարման վարքագծերը
- Պլանավորումը եւ նպատակադրումը բարդունակ միջավայրում
- Որոշումներ կայացնելու եւ հանձնարարություններ տալու հմտությունները
- Վերահսկողության ռազմավարությունը եւ մեթոդները
- Աշխատողների բահագրգռումը աշխատանքի նկատմամբ
- Մարդկանց հետ հաղորդակցվելու եւ նրանց լսելու հմտությունները
- Արդյունավետ ղեկավարման ոճերը
- Ժամանակի ճիշտ օգտագործումը եւ գործարարության բարոյագիտությունը

- Դասընթացը կվարի Հայաստանի ամերիկյան համալսարանի դասախոս Մայլզ Քոնրադը
- Սկիզբը ս. թ. հունիսի 3 - հուլիսի 4 (5 շաբաթ. շաբաթական 4 ժամ)
- Օրերը երեքշաբթի եւ ուրբաթ. ժամը 9:00-ից մինչեւ 10:50
- Պարապմունքները կընթանան անգլերեն լեզվով համաժամանակյա հայերեն թարգմանությամբ
- Գրանցումը եւ վճարումը տեղի կունենա ՀԱՀ-ի 19 ա սենյակում. մինչեւ մայիսի 30-ը
- Դասընթացին կարող են մասնակցել միայն առաջին 30 գրանցվածները
- Վարձը 45 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
**ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻՆ ԵՎ ԱՊԱԳԱ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՆ**
**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՀԱՅ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԽՈՒՄԲ (ՀՏԽ)**
**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԵԶՆՈՅԻ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՏԵՂ**

Միացյալ Նահանգների կողմից ֆինանսավորվող Բիզնես Ինկուբատորի եւ Նորարարական Տեխնոլոգիաների (ԲԻՆՏ) կենտրոնները գործելու են Հայաստանի մի քանի քաղաքներում այդ թվում Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում: ԲԻՆՏ կենտրոնները աջակցելու են նորաստեղծ ձեռնարկություններին, բարելավելու են գործարարների գործունեությունը եւ առաջ են քաշելու տնտեսական զարգացման ու արտադրողականության բարձրացման նորարարական մոտեցումներ:

Բիզնես կենտրոնների ստեղծման նպատակը «փոքր» եւ «միջին» բիզնեսի զարգացման միջոցով նոր աշխատատեղեր ստեղծելը եւ արտադրության ու ծառայությունների ընդլայնումն է: Ինկուբատորներն իրենց կազմում միավորում են բիզնես միավորները միեւնույն տարածքում եւ հոգում գործարարների կարիքները (ընդհանուր ծառայությունների նկատմամբ (կապի միջոցներ ֆաքս, էլ. փոստ, դատաբնահանում եւ այլն), ինչպես նաեւ աջակցում են գործարար ղեկավարներին (մոտենցիալ գնորդների եւ հումքի ու ռեսուրսների ձեռք բերում, աշխատանքի կազմակերպում արդյունավետ ճանապարհով, արտասահմանյան գործընկերների կամ գնորդների հետ կապերի հաստատում) եւ գործարարներին վերապատրաստման ծառայություններ առաջարկելու միջոցով:

Միացյալ Նահանգներում փոքր բիզնեսի գործունեության ոլորտն ընդգրկում է աշխատատեղերի մոտ 90 տոկոսը: Սակայն ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, «փոքր» եւ «միջին» բիզնեսով զբաղվողների ավելի քան 80 տոկոսը գործունեության առաջին երկու տարիների ընթացքում հանդիպում են դժվարությունների եւ հաճախ ձախողվում են: Դրանց աշխատանքի արդյունավետությունը կարելի է մեծապես բարելավել բիզնես ինկուբատորների միջոցով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկու տարի հետո բիզնես ինկուբատորների հովանավորության ու օժանդակության տակ գտնվող «փոքր» գործարարությամբ զբաղվողների 75 տոկոսը դեռեւս գործում է այն ժամանակ, երբ արդեն դուրս են գալիս բիզնես ինկուբատորի կազմից, նրանք շարունակում են ունենալ աճող եկամուտներ, առաջարկում են նոր աշխատատեղեր եւ ընդլայնվում են:

Առաջարկություններն ուղղված են այն ձեռներեցներին ու ապագա գործարարներին, որոնք ցանկություն կունենան կենտրոնների վարձակալները դառնալ: Առաջարկը վերաբերում է բոլոր գործարար ոլորտներին, այդ թվում արտադրությանն ու տեխնոլոգիաների զարգացմանը, մասնագիտական ծառայություններին եւ առեւտրին:

Առաջարկությունները պետք է ներկայացվեն տպագիր հայերեն ու անգլերեն լեզուներով եւ չգերազանցեն երեք էջի սահմանները: Դրանք պետք է պատասխանեն հետեւյալ հարցերին.

1. Գործունեության ծավալման վայրը (Երեւան, Գյումրի, Վանաձոր եւ այլն):
2. Ինչպես է տվյալ բիզնեսի կամ ձեռնարկության անվանումը:
3. Նշեք ձեռնարկության ղեկավար աշխատողների անունները, հասցեները եւ հեռախոսի համարները:
4. Համառոտ ներկայացրեք ղեկավարների՝ գործարարության տվյալ ոլորտում նախկինում ունեցած փորձի համառոտ բնութագրերը:
5. Որեւէ ձեւով ցույց տվեք տվյալ բիզնեսի անհրաժեշտությունը կամ դրա նկատմամբ պահանջարկի առկայությունը:
6. Տարեկան որքան եկամուտ է նախատեսվում:
7. Տվեք աշխատողների նախատեսվող քանակը:
8. Նշեք Ձեր գործի համար անհրաժեշտ ռեսուրսների եւ միջոցների ցանկը:

**Առաջարկությունները ներկայացնել հետեւյալ հասցեով. Երեւան, 375018, Կուզնեցով 30,**
(Հին ստադիոնի կողմից գալիս Նար-Դոսին ուղղահայաց առաջին փողոցը: Կարելի է հասնել Բժշկական ինստիտուտի դիմացից նստելով համար 29 կամ 60 երթուղային տաքսիները):
«Հայ Տեխնոլոգիական Խումբ» կազմակերպությանը

*Շրջանների ձեռներեցները կարող են ներկայացնել Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գյումրիի, Վանաձորի, Կապանի կամ Գորիսի կրթահամալիրներից որեւէ մեկին՝ հասցեագրելով կրթահամալիրի տնօրենին*

- Ներկայացման վերջնական ժամկետը 1997 թ-ի հունիսի 10-ն է:
- Առաջարկությունների վերաբերյալ հարցերն ուղղել Անունը. *Հասմիկ Գագիկյանին, ՀՏԽ*

Հեռախոս. *57-80-37, Երեւան, Ֆաքս՝ 151-796*

Առաջարկությունները կգնահատվեն հանձնաժողովի կողմից: Խոստումնալից առաջարկություններ ներկայացրած անձանցից հետագայում կպահանջվի ներկայացնել գործունեության ծրագիր (բիզնես պլան):

*ՎԱՐՈՒԺԱՆ ՏԵՐ ՍԻՄՈՆՅԱՆ*
*Գործադիր տնօրեն*
*Հայ Տեխնոլոգիական խումբ, Ֆրեզնո, ԱՄՆ*
*ՎԻԼԻԱՄ Ս. ՍԱԼԼԻՈՆ,*
*ՍՊՀ երկրներում տնտեսական զարգացման ծրագրերի տնօրեն, որոֆեսոր*
*Քրայգի բիզնես դպրոց*
*Կալիֆոռնիայի պետական համալսարան Ֆրեզնո*

# ADANA

COMMERCIAL BANK

★ **Ընդամենը 1% -ով կատարում ենք փոխանցումներ Մոսկվայից և Սանկտ-Պետերբուրգից 1 օրվա ընթացքում, իսկ աշխարհի այլ երկրներից՝ 3 օրվա ընթացքում անհատ և իրավաբանական անձանց համար:**

★ **Ամենաշահավետ պայմաններով տարածում ենք Master Card/ Euro Card և սպասարկում ենք Master Card/ Euro Card, Visa, Diners Club, JCB:**

★ **Ընդունում ենք ավանդներ հետեւյալ տոկոսադրույքներով՝**

| ԺԱՄԿԵՏ / ՏԱՐԱԴՐԱՄ | 1 ԱՄԻՍ | 2 ԱՄԻՍ | 3 ԱՄԻՍ | 6 ԱՄԻՍ | 9 ԱՄԻՍ | 12 ԱՄԻՍ |
|---|---|---|---|---|---|---|
| USD DEM FRF | 2.5% | 5.0% | 9.0% | 18.0% | 27.0% | 36.0% |
| AMD RUR | 3.0% | 6.0% | 10.0% | 20.0% | 30.0% | 40.0% |

Նվազագույն գումարը չի սահմանափակվում:

★ **Կատարում ենք բանկային ցանկացած գործառնություն:**

**Դիմեցեք ԱԴԱՆԱ ԲԱՆԿ**
**Երևան, Նալբանդյան 5, հեռ. 58-38-64, 58-59-80**

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ՝ 589167, 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149 Պատուեր 586 Տիրաժը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 26.05.1997 Գինը՝ 100 դրամ